# Ազգ
Azg

30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 191(5043)

ISSN: 1829-1651


# «Եթե պատերազմը քոնն է, խաղաղությունն էլ քոնը կլինի»

## *Մարդկային պատմություններ, կերպարներ ու խոհեր առաջին գծից*

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Մարտունի, ԼՂՀ-Երեւան**

«Հյութ կխմե՞ք»: Սա առաջին հարցն է, որ առաջին գիծ մեկնած լրագրողներին հարցնում են զինվորները: «Չէ, շնորհակալություն», պատասխանում ենք այն ցանկությամբ, որ հյութը մնա զինվորին: «Ինչո՞ւ», վիրավորվում են նրանք: «Շատ ունենք՝ մասուրի, ծիրանի, շատ համեղ է», շարունակում է զինվորներից մեկը: «Իսկ գուցե սո՞ւրճ խմեք», ընկերոջ խոսքն է շարունակում մյուս զինվորը: Սուրճից չենք հրաժարվում: Զինվորներից մեկը սուրճ է պատրաստում՝ շատ քաղցր ու կարծես այդ շաքարի պարունակությամբ փորձում իր ոգեւորությունն ու ուրախությունն արտահայտել: Առաջին գիծ այցելած զինվորներին քաղցրավենիք էինք տարել. կարծում էինք՝ քաղցրավենիքի կարոտ են, բայց այդպես չէր: Իրենց քաղցրավենիքն են հյուրասիրում ու հրավիրում սուրճի սեղանի: Ասում են՝ սննդի պակաս չենք զգում, միակ խնդիրը սուրճի բացակայությունն է: Ընդհանուր սննդակարգում սուրճ չկա, զինվորներն իրենց զորամասի թեյարանից են գնում ու հավելում են՝ եթե հնարավորություն կա, սուրճն էլ ընդգրկվի սննդակարգում:



Մինչ առաջին գիծ բարձրանալը մեզ զգուշացնում են՝ գլուխներդ ցածր կպահեք, հակառակորդը մեզանից մի քանի հարյուր մետրի վրա է ու ամեն վայրկյան կարող է կրակել: Մինչ բլինդաժ հասնելը դժվար ճանապարհ ենք կտրում: Ուղեկցող զինվորն ասում է, որ աշնանն ու ձմռանն այս ճանապարհով անցնելն իսկական տանջանք է, բայց զինվորներն արդեն սովորել են:

Վերեւում տարբեր պատմություններ են, տարբեր մարդիկ, կենսագրություններ, մտածելակերպ: Ծառայության վեց ամիսը լրացած զինվորները 14 օրով բարձրանում են առաջին գիծ: Մինչ դիրքեր բարձրանալը նրանք տիրապետում են զենքի կիրառման նրբություններին, մարտական պատրաստվածությունը հասցվում է լավ աստիճանի, եւ միայն համոզվելուց հետո, որ սահմանի պահպանությունն ապահով ձեռքերում է, նորակոչիկ զինվորներին ուղարկում են առաջին գիծ: Տես էջ 3

# Հանդիպեցին ու լսեցին համանախագահների գաղափարները՝ «որպես աշխատանքային առաջարկ»



Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները, ինչպես տեղեկացվել էր նախապես, հոկտեմբերի 27-ին հանդիպել են Փարիզում: Հայաստանի ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեի, Իգոր Պոպովի, Ժակ Ֆորի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի հետ: Այնուհետեւ հանդիպումը շարունակվել է Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի մասնակցությամբ:

«Համանախագահներն ընդգծել են կողմերի միջեւ լարվածության նվազեցման կարեւորությունը», բավականին անորոշ եւ ընդհանրական նշվում է արտաքին գերատեսչության հաղորդագրության մեջ, հավելմամբ, որ «իբրեւ աշխատանքային առաջարկ նրանք (համանախագահները) ներկայացրել են իրենց գաղափարները՝ խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով»: Տես էջ 2

# Ադրբեջանում նոր սկանդալ է հասունանում

«Թուրան» գործակալության հաղորդմամբ՝ Դասական ժողճակատ կուսակցության առաջնորդ Միրմահմուդ Միրալիօղլուն երեկ «հրավիրվել է Բաքվի դատախազություն»: Քաղաքական գործչին ուղարկված ծանուցագրում ասված է եղել, որ նա հրավիրվում է «ցուցմունքներ տալու մի գործով, որը հետաքննում է դատախազության հատուկ կարեւորության գործերով քննիչ Վագիֆ Սուլեյմանովը», սակայն նշված չեն եղել ո՛չ գործի համարը, ո՛չ քրօրի հոդվածը, ըստ որի այն հարուցվել է:

Դասական ժողճակատ կուսակցությունից «Թուրանին» տեղեկացրել են, որ կասկածում են, թե իրենց առաջնորդին հարցաքննության են կանչել էքս-նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին «թունավորելու գործով նախաքննության շրջանակներում»: Ինչպես ավելի վաղ առիթ ենք ունեցել գրելու, իշխանամետ «Ժամանակակից մուսավաթ» կուսակցության առաջնորդ Հաֆիզ Հաջիեւը դիմել է Ադրբեջանի գլխավոր դատախազությանը՝ պահանջելով հետաքննություն տանել «թունավորելու միջոցով Աբուլֆազ Էլչիբեյին կյանքից զրկելու փաստով»: Տես էջ 5

# ԱՄՆ ռազմածովային ուժերի քարտուղարը Հայաստանում

**ԱՄՆ ռազմածովային ուժերի քարտուղար Ռեյ Մեյբուսը երեկ Երեւանում հանդիպում ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ: Քննարկվեցին համագործակցության ընդլայնման հնարավորությունները եւ տարածաշրջանային ու համընդհանուր անվտանգությանը վերաբերող հարցեր:**

**Ռազմածովային ուժերի քարտուղար Մեյբուսն իր խորին գնահատանքը հայտնեց Աֆղանստանում իրականացվող առաքելությանը եւ Կոսովոյի խաղաղապահ գործողություններին Հայաստանի մասնակցության վերաբերյալ: Նա նաեւ անդրադարձավ պաշտպանական բարեփոխումների, խաղաղապահ գործողությունների եւ ուսուցումների, ինչպես նաեւ արհեստավարժ կրտսեր սպայական կազմի ձեւավորման կարեւորությանը: Քննության առնվեց նաեւ Եվրոպայում ԱՄՆ ծովահետեւակային ուժերի սեւծովյան ռոտացիոն ուժերի շրջանակում իրականացվող համագործակցությունը:**

**«Շնորհակալ եմ հայ ժողովրդին ջերմ ընդունելության ու հյուրընկալության համար,- ասաց ռազմածովային ուժերի քարտուղար Մեյբուսը,- մենք կարեւորում ենք Հայաստանի հետ մեր գործակցությունը, եւ իմ այս այցը փաստում է հարավկովկասյան տարածաշրջանի կարեւորությունը»:**

# «Առաջին նահանգ»-ի առաջին քայլը

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

**Վերջին օրերին երկու իրադարձություն արձանագրվեցին, որոնք խիստ ուշագրավ լինելուց զատ, նաեւ, անհրաժեշտ աշխատանքի պարագայում, բավական խոստումնալից մի գործընթաց են խոստանում: Նախ Ադրբեջանը ճանաչեց Հարավային Սուդանի անկախությունը, որը, հիշեցնենք՝ միայն Հարավային Սուդանի տարածքում անցկացված համաժողովրդական հանրաքվեով անկախացավ «մայր» Սուդանից, իսկ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգը դարձավ առաջին օտարերկրյա պետական միավորը, որը ճանաչեց Արցախի անկախությունը:**

**Ու եթե Իսպանիան թույլատրեր Կատալոնիային անկախության հանրաքվե անցկացնել, ապա աշխարհում կսկսվեր ազգերի ինքնորոշման իրավունքի շքերթ: Սակայն, անկախ իսպանական վետոյից, կատալոնացիները լի են վճռականությամբ:**

**Իսկ առայժմ՝ Հարավային Սուդանի ինքնորոշված ժողովրդի ու Ադրբեջանի մասին: Միանգամից նշենք, որ Բաքվի այս քայլը հասկանալ այդքան էլ դժվար չէ: Նավթով հարուստ «նախկին մեծ Սուդանի» նավթային հիմնական պաշարները կենտրոնացած են հենց երկրի հարավային մասում, որն այսօր Հարավային Սուդանի անկախ պետությունն է: Բնականաբար Ադրբեջանը պետք է հարաբերություններ ունենա աշխարհում նավթի գեթ մեկ շատրվան ունեցող երկրի հետ, իսկ դրանից առաջ պետք է ճանաչի այդ երկիրը: Հետեւաբար՝ Բաքուն ճանաչեց Հարավային Սուդանը, իսկ ադրբեջանական բազմաթիվ լրատվամիջոցներ այս նուրբ թեմայի շուրջը նախընտրեցին մանրակրկիտ վերլուծականներով հանդես չգալ՝ տեղեկացնելով միայն բուն փաստը ու շատ արագ մոռացության մատնելով...**

Տես էջ 3

# Հացարտադրության մերօրյա առանձնահատկությունները

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**




Հայաստանյան հանրության առօրյա մտահոգությունների շարքում առաջնայիններից մեկը հացի գինն է. հերթական անգամ ե՞րբ կթանկանա հացը: Հարցը մշտապես օրակարգում են պահում հատկապես լրատվամիջոցները՝ մեկ նշելով Հայաստանում ցորենի նվազ բերքը, ապա Ռուսաստանից արտահանման ծավալների նվազեցումը, չմոռանալով նաեւ հիշեցնել աշխարհի այս ու այն տարածաշրջանում արձանագրված երաշտն ու ցորենի համաշխարհային գների բարձրացումը: Մասամբ ծանոթ լինելով հատկապես վերջին գործոնին՝ հարկ է նշել, որ անցած 20-25 տարում հիմնական հացահատիկային մշակաբույսի 1 տոննայի գինը 200-220 դոլարից այսօր հասել է 250-270 դոլարի, որի հայաստանյան արձանագրումները շատ ավելի մտահոգիչ ու անհանգստացնող են, որպիսի դրսեւորումներ չենք տեսնում ոչ տարածաշրջանի երկրներում, ոչ էլ տասնյակ այն պետություններում, ուր ժամանակավոր թե մշտապես հաստատվում են մեր հայրենակիցները:

Ինչու է անհանգիստ հայ հանրությունը. որովհետեւ նրան անվերջ մատուցվում է այն մտայնությունը, ըստ որի երկիրն այսօր ապահովում է իր միայն հացի պահանջին անհրաժեշտ ցորենի հազիվ 30-35 տոկոսը, որը որոշ լավատեսական սցենարների շնորհիվ կարելի է հասցնել մինչեւ 70 տոկոսի: Ստացվում է, որ այս տարվա 220 հազար տոննա բերքը կրկնապատկելու պարագայում այդ ցուցանիշը կունենանք: Չգիտես ինչու չի հիշվում 2000-ականների սկիզբը, երբ հացահատիկի 400 հազար տոննան գերազանցող բերք հավաքվեց, իսկ նախորդ տարիների պես 300 հազար տոննա ցորենի ներկրումը բոլորովին չնվազեց: Հանրությունը չի ստանում այն հարցերի պատասխանները, թե ի՞նչ է լինում տեղում աճեցված եւ ներկրված 700-800-հազար տոննա ցորենը, դրա ո՞ր մասն է ալյուր դառնում, որ մասը՝ սպիրտ, ի՞նչ ծավալ է կազմում անասնակերը, ինչքա՞ն մակարոնեղեն ու հրուշակեղեն են իրականում արտադրվում:

Տես էջ 4

# Բելգիական Incofin-ը դարձավ «Արարատբանկի» բաժնետերերից մեկը

«Արարատբանկի» եւ բելգիական Incofin Investment Management ընկերության միջեւ երեկ ստորագրված պայմանագրի համաձայն՝ բելգիական ընկերությունը դարձավ «Արարատբանկի» բաժնետեր: Պայմանագիրը ստորագրեցին «Արարատբանկի» խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանը, վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը եւ Incofin Investment Management ընկերության ներդրումների գծով պատասխանատու Գիրթ Պետերմանսը: Ստորագրման արարողությանը ներկա էին եւ ելույթ ունեցան Հայաստանի կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը, էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, Հայաստանում Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ներկայացուցիչ Վալերիու Ռազլոգը:

ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանն իր ելույթում նշեց, որ «Արարատբանկի» նպատակը Հայաստանի բանկային համակարգի կայացումն ու զարգացումն են: Նա վստահելի կառույց համարեց բանկը, տեղեկացնելով, որ վերջինիս վարկային ներդրումների մեկ երրորդը փոքր բիզնեսին տրվող վարկերն են: ԿԲ նախագահի կարծիքով՝ նոր բաժնետիրոջ ընդգրկումը կզարգացնի բանկի այս հատվածը: «Արարատբանկի» բարձր ցուցանիշների մասին վկայակոչող մեկ այլ ցուցանիշ է վարկերի 99 տոկոս վերադարձելիությունը: Բանկը նաեւ ակտիվ գործունեություն է ծավալում կապիտալի շուկայում, որտեղ վերջերս թողարկեց արտարժութային պարտատոմսեր: Արթուր Ջավադյանը վստահություն հայտնեց, որ Incofin-ն իր ներդրումը կունենա բանկի զարգացման մեջ:

Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը կարեւոր քայլ համարեց օտարերկրյա ներդրողի հայտնվելը մեր տնտեսության եւ բանկային համակարգի համար: Նա նշեց, որ «Արարատբանկը» դառնալու է ավելի վստահելի եւ ուղղված դեպի տնտեսությունը, քանի որ բանկն այժմ էլ օրինակ է, թե ինչպես կարելի է մասնակցել տնտեսության զարգացմանը:

«Արարատբանկի» խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանն անդրադարձավ բանկի ստեղծման եւ զարգացման գործընթացին, ասելով, որ երբ այն ստեղծվեց, բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում էր իրեն: Սակայն ԿԲ կողմից կորպորատիվ կառավարման համակարգի ներդրումից հետո ինքը հրավիրեց Աշոտ Օսիպյանին, որոշեց բանկը դարձնել բաց բաժնետիրական ընկերություն եւ ներգրավել նոր բաժնետերերի: Բարսեղ Բեգլարյանն այն կարծիքը հայտնեց, որ չպետք է բանկը լինի մեկ մարդու տնօրինման տակ: Այս առումով նա իր ուրախությունը հայտնեց նոր բաժնետիրոջ՝ Incofin Investment Management-ի ներգրավմամբ:

Գիրթ Պետերմանսը տեղեկացրեց, որ Incofin-ը բելգիական ընկերություն է, որը կառավարում է 120 մլն եվրո արժողությամբ հիմնադրամներ եւ ներդրումներ է կատարում աշխարհի ավելի քան 40 երկրներում՝ հիմնականում փոքր բիզնեսում եւ գյուղատնտեսության մեջ: Հայաստանում իրականացվող «Գյուղական իմպուլս» ծրագիրը իրականացվում է 15 այլ երկրներում եւս: Գիրթ Պետերմանսի համոզմամբ՝ «Արարատբանկն» արժանի է, որ ներդրումներ կատարեն, եւ սա ընկերության վերջին ներդրումը չէ բանկում: Ներդրումների գծով պատասխանատուն նաեւ նշեց, որ միայն ֆինանսական օգուտ չէ, որ իրենք ակնկալում են: Ընկերությանն անհրաժեշտ էր կազմակերպություն, որ կարողանար աշխատել այն նույն ոլորտներում, որտեղ իրենք են աշխատում՝ փոքր բիզնես եւ գյուղատնտեսություն: Այդպիսին «Արարատբանկն» էր, որի հետ Incofin-ը նույն նպատակներն ունի:

Հայաստանում ՎԶԵԲ ներկայացուցիչ Վալերիու Ռազլոգը առանձնահատուկ հաճելի համարեց, որ Incofin-ը Հայաստանում ներդրումներ կատարելու համար ընտրեց «Արարատբանկը»: Նա տեղեկացրեց, որ Եվրոբանկը «Արարատբանկին» տեսնում է որպես դինամիկ, նորարար եւ շրջահայաց բանկի, հատկապես դրական համարելով, որ բանկն իր 43 մասնաճյուղերի միջոցով գործունեություն է ծավալում Հայաստանի ամբողջ տարածքում, ֆինանսավորելով փոքր բիզնեսը:

«Արարատբանկի» վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը այս գործարքը բանկի համար պատմական անվանեց, որն, ըստ նրա, բխում էր բանկի զարգացման երկարատեւ ծրագրից: Incofin-ը համաշխարհային ճանաչում եւ վարկավորման եւ կապիտալի շուկայում մեծ փորձ ունեցող ընկերություն է: Բանկի վարչության նախագահի ներկայացմամբ՝ վերջին 4 տարիներին «Արարատբանկում» ներդրվել են բանկային համակարգի կառավարման մեկ տասնյակից ավելի լավագույն տեխնոլոգիաներ, ինչն ավելի գրավիչ է դարձրել բանկը ներդրողների համար: Նա տեղեկացրեց, որ Incofin-ը «Արարատբանկի» խորհրդում կունենա մեկ տեղ եւ կտնօրինի բաժնետոմսերի 10 տոկոսը, կատարելով 5-6 մլն դոլարի ներդրում: Աշոտ Օսիպյանը վստահություն հայտնեց նաեւ, որ բանկում կներդրվեն նոր գործիքներ, որոնց արդյունավետությունից կշահեն եւ՛ բաժնետետերը, եւ՛ հաճախորդները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կենդանիների դիմակահանդես-շքերթ. եւս մեկ կենսուրախ միջոցառում՝ ուղղված բնապահպանական խնդիրների իրազեկմանը



Արդեն 3-րդ անգամ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC), իր գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ Երեւանի կենդանաբանական այգին իրականացրին կենդանիների դիմակահանդես-շքերթ միջոցառումը:

Միջոցառման նպատակն է բարձրաձայնել կենդանիների իրավունքների մասին, մասնավորապես Հայաստանի այն կենդանիների, որոնք անհետացման եզրին են: Որպես կորպորատիվ քաղաքացի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ն հետեւողական մոտեցում է դրսեւորում այնպիսի հիմնախնդիրների լուծման հարցում, ինչպիսիք են Հայաստանի կենսաբազմազանության պաշտպանությունն ու պահպանումը: Երիտասարդությանն ուղղված բնապահպանական իրազեկման քարոզարշավները շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված առավել արդյունավետ միջոցներից են: Այդ տրամաբանության արդյունք է նաեւ Հայաստանում վայրի բնության եւ մշակութային արժեքների պաշտպանության հիմնադրամի կազմակերպած միջոցառումների իրականացմանն աջակցելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի պատրաստակամությունը:

Միջոցառմանը մասնակցելու նպատակով Գերմանիայի Բրեմեն քաղաքից Երեւան էր ժամանել Կոնֆուսաո կառնավալային խումբը: Այս տարի դիմակահանդես-շքերթին մասնակցեցին հարյուրավոր դպրոցականներ Երեւանից ու Հայաստանի տարբեր մարզերից:

Երթի մեկնարկը տրվեց Ազատության հրապարակից եւ շարունակվեց Հյուսիսային պողոտայով մինչեւ Հանրապետության հրապարակ: Տոնական միջոցառումը շարունակվեց կենդանաբանական այգում, որտեղ մասնակիցները վայելեցին բրեմենյան երաժիշտների կենսուրախ համերգը:





# Աքչամի նորագույն գիրքը՝ թուրքական արխիվների բացահայտումներով



**Օսմանյան կայսրության արխիվները խիստ կարեւոր են Հայկական ցեղասպանության ուսումնասիրության համար: Քչերն են ծանոթ այդ տարեգրություններին, եւ այդ քչերի թվում Թաներ Աքչամն առանձնանում է որպես առաջին գիտնականներից մեկը, որ հրապարակայնորեն ընդունելով կատարված ցեղասպանության փաստը՝ սկսեց լրջորեն ուսումնասիրել այդ ժամանակաշրջանի իրադարձությունները եւ հրատարակել արժեքավոր հատորներ:**

**Հոկտեմբերի 18-ին Նյու Յորքի հայկական եկեղեցու արեւելյան թեմի հանդիսությունների դահլիճում նա հասարակությանն է ներկայացրել իր նորագույն հատորը, որը կրում է «Երիտթուրքերի ոճրագործությունները ընդդեմ մարդկության: Հայերի ցեղասպանությունը եւ էթնիկական զտումները Օսմանյան կայսրությունում» վերնագիրը:**

**ՀԲԸՄ Արարատի, ՔԱՐՍ-ի, Եսայան-Կեդրոնականի եւ Դպրեվանքի շրջանավարտների միության, Հայ տան, Վարդանանց ասպետների եւ դուստրերի, ինչպես նաեւ Թեքեյան մշակութային միության ասոցիացիայի հովանավորությամբ անցկացված երեկոն բացել է թեմական խորհրդի նախագահ Օսկար Թադոսյանը, որից հետո ելույթ է ունեցել մրցանակակիր գրող Փիթեր Բալաքյանը: Վերջինս կարեւորել է Աքչամի լուման ցեղասպանության ուսումնասիրությունների բնագավառում, նշելով, որ նա այդ ուսումնասիրությունները լրացնում է թուրքական արխիվների բացահայտմամբ:**

**Անցյալի դեպքերին քննադատաբար վերաբերվող եւ օսմանյան արխիվներում մինչեւ օրս գաղտնի պահված փաստերը բացահայտող Աքչամի գրքի կենտրոնական թեման բնակչության վիճակագրությունն է՝ ժողովրդագրական քաղաքականության կապը հայերի դեմ գործադրված բարբարոսությունների հետ:**

**Ըստ այդ առթիվ ստացված մամուլի հաղորդագրության՝ երեկոյի ավարտին ներկաները հնարավորություն են ունեցել մտերմիկ զրույց ունենալու Թաներ Աքչամի հետ:**

**Հ. Ծ.**

# Հանդիպեցին ու լսեցին համանախագահների գաղափարները՝ «որպես աշխատանքային առաջարկ»

*1-ին էջից*

**Թե ինչ է դա նշանակում՝ տվյալ հայտարարության հիմքով գուշակությունների ոլորտից է, սակայն ակնհայտ է, որ այդուհետեւ ձեւակերպումը, թե «Նախարարները վերահաստատեցին իրենց վճռականությունը՝ շարունակելու համանախագահների հետ համատեղ աշխատանքը՝ խաղաղ կարգավորման հասնելու նպատակով», կարելի է մեկնաբանել որպես Մինսկի խմբի աշխատանքների դեմ ադրբեջանական հայտարարությունների սնանկություն:**

**«Նախարարները եւ համանախագահները պայմանավորվեցին այդ գաղափարների շուրջը քննարկումները շարունակել համանախագահների՝ նոյեմբերին տարածաշրջան կատարելիք այցի ընթացքում», տեղեկացնում է Հայաստանի ԱԳՆ հաղորդագրությունը այն դեպքում, երբ հանդիպման հաջորդ օրը տարածված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունն էլ նույն բանն է նշում՝ տառացիորեն ու բառացիորեն նույնը:**

**Արտգործնախարարության ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածած հայտարարությունների նույնությունը դժվար թե պատահականությունների շարքից լինի, հատկապես երբ նույնաբովանդակ է նաեւ Ադրբեջանի արտաքին գերատեսչության պաշտոնական հաղորդագրությունը: Ըստ այդմ՝ «հանդիպմանը մտահոգություն է հայտնվել հակամարտության շուրջը ստեղծված վիճակի առնչությամբ, ինչպես նաեւ լայն քննարկումներ ու խորհրդակցություններ են անցկացվել հակամարտության ու ստատուս քվոյի փոփոխության առումով»:**

**Ըստ Ադրբեջանի էլ՝ կողմերը պատրաստակամություն են հայտնել «շարունակել հակամարտության խաղաղ կարգավորման որոնումը», քննարկվել է նաեւ նոյեմբերի երկրորդ կեսին տարածաշրջան համանախագահների ծրագրված այցելությունը: Հետաքրքրական է, որ ադրբեջանական կողմը լռում է համանախագահների՝ գործընթացն առաջ մղելու «գաղափարների» մասին, ինչն անուղղակիորեն կարող է վկայել հանդիպմանն Ադրբեջանի ոչ այնքան նպաստավոր վիճակում գտնվելու մասին:**

**Այս ամենով հանդերձ, էականը տվյալ դեպքում հենց կայացած հանդիպումն է, որ հարցականի տակ էր դրվում օգոստոսի 31-ին Հունգարիայից Ադրբեջանին արտահանձնված մարդասպան Ռամիլ Սաֆարովին հարեւան երկրում հերոսացնելու բազմիցս դատապարտված ադրբեջանական պահվածքից հետո:**

**Վ. Պ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Եթե պատերազմը քոնն է, խաղաղությունն էլ քոնը կլինի»

*1-ին էջից*

### Թիկունքում հայրենիքն է

**Միքոն** զորամասի ռեփերն է: Նրա շնորհիվ զորամասում բոլորն անգիր գիտեն էմինեմի, 50cent-ի, Միշոյի ու այլ հայտնի ռեփերների ստեղծագործությունները: Հաշվել է՝ ծառայելու է 730 օր, դրանցից չորս ամիս մեկ օրն արդեն անցյալում է: Սիրային երգեր չի կատարում, կյանքի դրվագներից է երգերի թեմաներ ընտրում: Զինվորական կյանքի մասին դեռ ստեղծագործություն չունի, բայց խոստանում է՝ ապագայում դա էլ կլինի, դեռ նոր է ծառայության մեջ: Չորս ամսվա ընթացքում Միքոն հասկացել է, թե ինչպես պետք է ծառայել բանակում: «Ոչ շատ խելոք պետք է լինես, ոչ շատ չար, որ կարողանաս բանակային կյանքում ներգրավվել: Սկզբում ամեն ինչ դժվար էր, խորթ, հետո հարմարվում ես կերակուրին էլ, ռեժիմին էլ»: Միքոն կողմ է, որ բանակում խստություն լինի: «Եթե խստություն չկա, անկարգություններ կլինեն»: Ասում է՝ բանակ է եկել միայն մեկ նպատակով, որ բարձրանա առաջին գիծ: Առաջին գիծ բարձրանալու համար դեռ շուտ է: Դեռ պետք է սովորի ու որոշակի պատրաստություն անցնելուց հետո բարձրանա առաջին գիծ: «Ինձ համար ծառայությունն ընկալվում է միայն դիրքերում, ուզում եմ ապրել զգացողությունը, որ թիկունքում հայրենիքն է ու դու քո ձեռքերով պետք է այն պահես»:



19-ամյա **Էդուարդ Մուսայելյանն** արդեն 11 ամիս ծառայության մեջ է: Փորձ, շփում, ինքնուրույնություն: Սրանք այն հատկանիշներն են, որ ձեռք է բերել ծառայության ընթացքում: Մինչ բանակ զորակոչվելն Էդուարդին ամենատարբեր խորհուրդներ են տվել, ինչպիսի նայվածքով ու քայլվածքով մտնել զորամաս, ի՞նչ ասել ու չասել, ո՞նց ուտել ու խոսել... հիմա նա ծիծաղով է հիշում այդ օրերը... ասում է՝ նման բան չկա: Ինքն էլ բանակ զորակոչվողներին խորհուրդ է տալիս. «Եղեք ուժեղ, հոգեբանորեն պատրաստվեք ծառայության: Ինչպես կյանքում, այնպես էլ ծառայության մեջ, կարեւորը մեկն է՝ չխաբել, եթե սուտ չես խոսում, ապա բանակում ոչ մի խնդիր չես ունենա»: «Անբասիր մրմունջներ», «Վարդանանք», «Քո հնարավորությունները, մարդ»: Սրանք այն գրքերն են, որ Էդուարդը կարդացել է ծառայության ընթացքում: «Համարյա բոլորը գիրք են կարդում», ասում է նա ու հավելում՝ ծառայությունը ոչ դյուրին գործ պատկերացրեք, ոչ էլ չափազանցրեք:



«Բանակում ծառայելը կյանքի մի հատված է: Էնպես չէ, որ հեշտ է, բայց դե մենք տղա ենք, պետք է ծառայենք: Մենք ծառայում ենք, արթուն ենք, որ մեր ընտանիքները հանգիստ քնեն: Եթե մեր ազգի մեջ հայրենասիրություն չլիներ հիմա երեւի մեր ազգը չէր լինի: Էն ժամանակ էլ մեր նման տղերքն են պահպանել երկիրը, հիմա հերթը մերն է: Սա կյանքի դպրոց է, որ պետք է անցնես, մի հատված է, որ պետք է լինի քո կյանքում», ասում է նա: **Մելոյան Արտակին**



զորամասում անվանում են դեմբել: 50 օրից նա կվերադառնա քաղաքացիական կյանք: Բանակից ե՛ւ լավն է տանում, ե՛ւ վատը: «Տղամարդկությունդ կրկնապատկվում է, քո մեջ նոր իդեաներ ու իդեալներ ես ձեւակերպում: Վատ բանն էլ այն է, որ այստեղ տարբեր մարդիկ են հավաքված ու երբեմն այնպիսի բաներ ես տեսնում, նախանձ ու չարություն, որ երեւի քաղաքացիական կյանքում դժվար հանդիպես: Էս ամեն ինչը մեզ կոփում է, դառնում ենք հասուն: Մենք տեսնում ենք ուրիշի սխալներն ու սովորում»:

Սեւանից **Եգոր Պողոսյանը** բանակից մտերմություն ու ընկերություն է տանում, ռազմական գիտելիքներ, բնավորության կայունություն ու համբերատարություն: Միակ բացասական բանը, որ զգացել է բանակում, զինվորի մահվան մասին լուր լսելն է: «Որ լսում



ենք՝ բանակում մեկին սպանել են, մեկին ծեծել են, մենք էլ ենք ծանր տանում: Ճիշտ է, մեզ մոտ նման բան չկա, մենք նման բան չենք տեսել, բայց որ իմանում ենք՝ նման բան է եղել, վատ ենք զգում, նեղվում, կուզենայինք, որ դա չլիներ»:

### «Իմ մեջ հաղթեց հայրենասեր զինվորը...»

Պայմանագրային զինծառայող **Գեւորգ Բաղդասարյանին** զորամասում եւ դիրքերում բոլորն են ճանաչում: Նա զորամասի լավագույն դիպուկահարներից է՝ օրինակելի սպա ու մարդ: Գեւորգն արդեն 10 տարի ծառայության մեջ է, իրեն անվանում է սահմանի զինվոր: «Սահմանում ինձանից առավել կարեւոր են իմ զինվորներն ու իմ դիրքը: Դա այն հատվածն է, որ տվել են ինձ՝ ու ես պետք է պահպանեմ»: Առաջին անգամ դիպուկահարի հրացանով կրակել է 26 տարեկանում: «Ուրախ չեմ, որ կպավ, ամեն դեպքում ինքն էլ է մարդ: Առաջին կրակոցից հետո շատ ծանր էի տանում: Շատ դժվար էր, ես էլ ամուսնացած եմ, ընտանիք ունեմ, ու բոլոր զգացողությունները խառնվել էին: Դիմացինն էլ երեւի ընտանիք ուներ, երեխա..էդ պահին իմ մեջ երկու հոգի էր խոսում, մարդ ու հայրենասեր զինվոր..էդ պահին իմ մեջ հաղթեց հայրենասեր զինվորը: Ամեն անգամ՝ կրակելուց հետո ինձ շատ վատ եմ զգում, խիղճս տանջում է, բայց նույն պահին հիշում եմ, որ քեռիս կռվի տարիներին վիրավորվել է, բարեկամներիցս մեկը մահացել, մյուսն՝ անհայտ կորել: Իրանք ինձ ուժ են տալիս, ու ես հասկանում եմ, որ դա պետք է, որ ես պաշտպանում եմ իմ հողը: Դա ինձ օգնում է, որ խիղճս հանգիստ լինի: Մենք երբեք առաջինը չենք կրակում, նրանք են կրակում: Վախից են կրակում: Մարդ եթե վախենում է, ամեն ինչի ընդունակ է լինում: Իրանք կրակում են, որ մեզ հասկացնեն, որ իրենք արթուն են: Իրենք զգում են մեր ուժն ու վախից նման քայլերի են դիմում», ասում է Գեւորգն ու հավելում. «Եթե պատերազմը քոնն է, խաղաղությունն էլ քոնը կլինի»:

### «Իմ դիմաց թշնամին է, բայց իմ կողքին հայ զինվորն է»

Մասնագիտությամբ բժշկուհի **Ալվարդ Օհանջանյանը** Մարտունու զորամասերից մեկում աշխատում է 2003-ից: Ռազմական կյանքն անվանում է ճակատագիր. Միակ նպատակը՝ ծառայությունը պատվով կատարելն է: «Սկզբում էնքան դժվար էր: Ես՝ կին արմատ, երեք հարյուր տղամարդու հետ: Կնոջ բա-



ցակայությամբ տղամարդիկ իրար հետ գռեհիկ, կոպիտ էլ են խոսում, բայց որ տեսնում են՝ իրենց հետ կին է նստած՝ քիչ-քիչ սովորում են, հարմարվում են քո ներկայությանը: Տղամարդիկ ասում են, «Ալվարդ, ինչ եկել ես մեզ մոտ, մեզ ավելի զգաստ ենք զգում»:

Շաբաթական երկու անգամ տիկին Ալվարդը բարձրանում է դիրքեր, առաջին գծում բուժօգնություն տրամադրում զինվորներին: «Դիրքեր բարձրանալուց ես միշտ ասում եմ՝ իմ դիմաց թշնամին է, բայց իմ կողքին հայ զինվորն է»: Տիկին Ալվարդը շատերի կյանքն է փրկել, առաջին օգնություն ցուցաբերել, արտակարգ դեպքեր շատ են եղել, սակայն կա մի դեպք, որ հիշողությունից ջնջել չի կարողանում:

«Երկրորդ գումարտակից Մովսիսյան Խաչատուր կար: Բարձրացա դիրքեր, ասում են՝ հիվանդ է: Ջերմությունը չափում եմ՝ 41 աստիճան: Երեխուն առաջին օգնության մեքենայով իջեցրինք ներքեւ, իմ ձեռքն էր բռնել ու ոչ մի կերպ բաց չէր թողնում: Տղան մեկ զառանցում էր, մեկ ուշաթափվում: Տեղափոխեցինք հոսպիտալ, ծանր վիճակում թոքաբորբ էր տանում: Ամբողջ ճանապարհին աստծուն խնդրում էի, որ ուշացած չլինենք, որ տղան փրկվի: Հոսպիտալից հետո տղային անմիջապես ուղարկեցինք Երեւան՝ Մուրացանի հիվանդանոց: Տղան փրկվեց... հետո նա պատմում է, որ երբ ուշքի է եկել, մորն ասել է՝ «Մա, բա ո՞նց էիր իմացել, որ հիվանդ եմ, եկել էիր դիրքեր, ձեռքս բռնել»: Մայրը զարմացել էր ու ոչինչ չէր հասկացել: Տղային թվացել էր, որ ամբողջ ճանապարհին ու մեքենայի մեջ իր ձեռքերը բռնել էր մայրը...:

«Զինվորի հետ աշխատելը հեշտ գործ չէ: Նրա հետ պետք է լինես հոգեբան, մանկավարժ, մայր, ընկեր, հարազատ: Իմ զինվորների հետ ավելի շատ ժամանակ եմ անցկացնում, քան երեխաներիս: Երբեմն երեխաներս բողոքում են, ասում են՝ մամ դու իրենց մեզանից շատ ես սիրում, ասում եմ՝ նրանք էլ են իմ բալեքը, իրենց ուրիշ ձեւ եմ սիրում, իրանց շնորհիվ է, որ դուք անվտանգ ապրում եք: Բոլորն էլ գիտեն, որ չորս երեխա տանն ունեմ ու մի քանի հարյուր երեխա զորամասում»:

**Հ. Գ. - Երկու օր զորամասում անցկացնելուց հետո վերադառնում ենք Երեւան: «Շնորհակալություն մեր կյանքն անվտանգ ու ապահով դարձնելու համար», ասում եմ սպաներից մեկին: «Դա մեր սուրբ պարտականությունն է, մեր առաքելությունը, շնորհակալություն, որ գնահատում եք մեր աշխատանքը...»:**

---

ՃԱՆԱՉՈՒՄ

# «Առաջին նահանգ»-ի առաջին քայլը

*1-ին էջից*

**Այլ հարց է Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգը: Սա Ավստրալիայի ամենահին ու ամենախիտ բնակեցված նահանգն է. 2012-ի մարտի վերջի տվյալներով՝ Նոր Հարավային Ուելսում ապրում է 7 մլն 272 հազար 800 մարդ՝ հիմնականում կաթոլիկ անգլիացիների ժառանգներ (ամբողջ Ավստրալիայի բնակչությունը 21 մլն մարդ է): Նահանգի մայրաքաղաքն ու ամենախոշոր քաղաքը Սիդնեյն է, նահանգն այլ կերպ Ավստրիալիայում անվանում են «պրեմիեր նահանգ» կամ «առաջին նահանգ»:**

**Հայերն Ավստրալիայում են հայտնվել դեռեւս 19-րդ դարից՝ հիմնականում Կոստանդնուպոլսից, Հնդկաստանից եւ Հարավարեւելյան Ասիայի երկրներից: Սակայն որպես համայնք՝ ավստրալահայերը կազմակերպվել են հիմնականում Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ այստեղ են եկել հայ գաղթականներ Միջին ու Մերձավոր Արեւելքի երկրներից: Ներկայումս, ըստ պաշտոնական տվյալների, Ավստրալիայում բնակվում է շուրջ 60 հազար հայ՝ հիմնականում Սիդնեյում (Նոր Հարավային Ուելս), Մելբուռնում, Բրիզբենում, Կանբերայում, Պերթում: Ինչպես նկատում ենք՝ Նոր Հարավային Ուելսում հայերը կենտրոնացած են միայն Սիդնեյ քաղաքում, որտեղ, ի դեպ, 1957-ին օծվել է Սուրբ Հարություն հայկական եկեղեցին: Ավստրալահայերի շրջանում կան պետական ծառայողներ, արհեստավորներ, բժիշկներ, փաստաբաններ եւ այլք:**

**Անշուշտ, կարող ենք պնդել, որ Նոր Հարավային Ուելսի կողմից Արցախի անկախության ճանաչումը ավստրալահայ համայնքի ջանադիր աշխատանքի արդյունք է, սակայն ամեն ինչ չէ, որ միանշանակ է: Ավստրալիան ղեկավարում է գեներալ-նահանգապետը, ում նշանակում է Մեծ Բրիտանիայի թագուհին: Գեներալ-նահանգապետը երկրում իրականացնում է լայն իշխանություն, հետեւաբար հնարավորություն ունի ազդելու այս կամ այն նահանգում ինչ-որ որոշման ընդունման կամ դրա չեղյալ հայտարարելու մեջ, չնայած Ավստրալիայի որոշ նահանգներ, այդ թվում՝ Նոր Հարավային Ուելսը, ունեն ինքնուրույնության որոշակի մակարդակ՝ առանձին խորհրդարան, զինանշան, դրոշ եւ այլն: Վերջերս, հիշեցնենք, Իլհամ Ալիեւը լուրջ դժգոհություն հայտնեց British petrolium հզոր նավթային ընկերությունից, որի բաժնետոմսերի զգալի մասը եւս պատկանում է բրիտանական թագավորական ընտանիքին: Եվ ահա բրիտանական նախկին գաղութ Ավստրալիայի նահանգը «հանկարծ» ճանաչում է Արցախի անկախությունը...**

**Ինչ խոսք, անկախ ամեն ինչից, քաղաքականությունը նաեւ հնարավորություն է, ինչից միայն հիմարները չեն օգտվում: Հետեւաբար ավստրալական նահանգի այս քայլից պետք է օգուտներ քաղել ու այս գործընթացը շարունակական դարձնել՝ անկախ Նոր Հարավային Ուելսի այս որոշման իրական դրդապատճառներից: Սա բավական լուրջ երեւույթ է. Բրիտանական աշխարհում մեծ կշիռ ու հեղինակություն ունեցող պետական մեկ միավոր ճանաչում է ԼՂՀ անկախությունը, ուրեմն մենք իրավունք չունենք դա թողնելու առանց զարգացումների:**

**Ի դեպ, Նոր Հարավային Ուելսը ունի նաեւ նահանգային կարգախոս՝ «Վերստին բարձրացած որքան պայծառ ես դու փայլում» (Orta Recens Quam Pura Nites): Հուսանք՝ սա մի օր կվերաբերի նաեւ Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցու կողքին բարձրացված հայկական զույգ պետությունների դրոշներին:**

ԱԶԳ

## Սոցիալական

# Թշվառներ

## *Պատմում են Գյումրու «Շիրակ կենտրոնի» տեսանյութերը*

Երեք երեխաների միայնակ մայր, 43-ամյա Ալմաստ Հակոբյանն իր ավուր հացը վաստակում է Գյումրու կենտրոնական շուկայում բեռնասայլակով ապրանքներ փոխադրելով... Նրա մասին «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության կայքէջում օրերս զետեղված տեսանյութում պատմվում է, որ կինը բնակության համար նույնիսկ սեփական տնակ չունի եւ արդեն երկար տարիներ մենակ ապրում է իր հին ծանոթներից մեկի վագոն-տնակում, իսկ նրա երեխաները մանկուց Երեւանի մանկատներից մեկում են: Ընտանիքը բնակարանային փոխհատուցման ենթակա չէ, քանի որ երկրաշարժին բնակարան չի կորցրել, եւ անհայտ է՝ երբեւէ այդպիսին կունենա՞...

Գյումրու անօթեւան ընտանիքների խնդիրներով զբաղվող «Շիրակ կենտրոնի» աշխատակիցները, պարբերաբար այցելելով քաղաքի տնակային ավաններում եւ այլ ժամանակավոր կացարաններում պատսպարված ընտանիքների ու նրանց նաեւ բաժանելով արտերկրի մեր առանձին հայրենակիցների տրամադրած նյութական օգնությունը, տիրող կարիքի ու թշվառության երբեմն անպատկերացնելի դրսեւորումների են ականատես լինում: Այդ ընտանիքների մասին կենտրոնի հրապարակումներն ու տեսանյութերը, որոնցից եւս մի քանիսին այստեղ կփորձենք անդրադառնալ, միշտ տեղ են գտնում նրա կայքէջում, տարածվում համացանցում:

Վերջին երեք տարում պետությունն իրոք լուրջ քայլ է արել Գյումրիում երկրաշարժից անօթեւանության խնդրին արմատական լուծում տալու համար, սակայն տարբեր պատճառներով փաստացի անօթեւան ընտանիքները քաղաքում դեռ զգալի թիվ են կազմում: Եվ եթե բնակարան, գլխի վերեւ կայուն ծածկ ունենալը լուծում է գոնե կենցաղային կարեւորագույն խնդիրը, բայց ոչ նյութականը, ապա տարբեր տեսակի ժամանակավոր կացարանների, շարքից դուրս եկած, փտած տնակների գաղջ միջավայրի անմարդկային պայմաններում, ծայրահեղ կարիքի մեջ տեւական ժամանակ ապրելը մարդու մեջ հաճախ սպանում է արժանապատվությունը, մարդկայինը... Ճիշտ է՝ դրա դեմ մաքառողներ, չհանձնվողներ էլ կան:

Քաղաքի կենտրոնական մասի տնակային ավաններից մեկում իր երկու դպրոցահասակ աղջիկների հետ բնակվող միայնակ մայր Քրիստինե Հարությունյանը, որպեսզի կարողանա երեխաներին պահել, շաբաթվա յոթ օրերը բաժանել է եւ յուրաքանչյուր օրն աշխատում է գյումրեցի հարուստ մարդկանցից մեկի տանն ու մեկ խանութում: Նրա օրավարձը, կախված աշխատանքի ծավալից, կազմում է ամեն ընտանիքից 1000-3000 դրամ: Իսկ ձմռան ամիսներին փայտե տնակը ջեռուցում է էլեկտրական սալիկով: Գյումրեցի հարյուրավոր ընտանիքների նման՝ այս ընտանիքն էլ թեեւ բնակվում է ժամանակավոր կացարանում, սակայն պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա անօթեւանների հերթացուցակում հաշվառված չէ: «Միայն ես մորս ու տատիկիս հետ գրանցված եմ եղել փլված շենքի հասցեում... մեկսենյականոցի, իրենք նորը ստացել են, իսկ ես իմ ընտանիքով շարունակելու եմ մնալ տնակում»:




Երեխաները տնակում են ծնվել: Քրիստինեն ինքը երկրորդ դասարանում է եղել, երբ տնակ են եկել, հիմա իր երեխաներից մեծը իններորդ դասարանում է... Փոքրն էլ չորրորդում է, ու երկուսն էլ գերազանցիկ են, հպարտանում է մայրը: Հույս ունի, որ աղջիկը հիմնական դպրոցից հետո ուսումնարան կընդունվի, դեղագործության բաժին:

Օրնիբուն աշխատում է, որ ապահովի նրանց դպրոցի հետ կապված ծախսերը, ուտելը, հագնելը, որ աղջիկներն ուրիշ երեխաներից հետ չմնան: «Որոշ չափով կարողանում եմ համ տան տղամարդու դեր կատարել, համ կնոջ»... Նպաստ են ստանում, որը տալիս է ձմռանը տաքանալու համար ծախսած էներգիայի դիմաց: Ցույց է տալիս տնակի «հարմարությունները». «Էս մի սենյակն է, որտեղ մենք կքնենք, էստեղ բազմոցը կբացենք, երկու երեխեքի հետ կքնենք... այստեղ անկողինը կհավաքենք-կդնենք... այստեղ կեփենք, էս էլ կոմունալն է (զուգարան, լվացվելու տեղ)»: Հետո լռում է ու՝ ծանր է, բա ինչ է...

«Շիրակ կենտրոնի» դիտարկումներով՝ ներկա պահին Գյումրիում ավելի քան 200 անօթեւան ընտանիքներ թեեւ երկրաշարժի հետեւանքով բնակարան են կորցրել ու մինչեւ օրս չեն փոխհատուցվել, սակայն անօթեւանների հերթացուցակում հաշվառված չեն, ինչի պատճառով դուրս են մնացել բնակբաշխման գործընթացից: Նրանցից մեկը Հերիքնազ Մարկոսյանի ընտանիքն է, որն իր երկու անչափահաս երեխաների ու տարեց մոր հետ բնակվում է «Անի» թաղամասի շենքերից մեկի՝ կոմունալ բոլոր տեսակ հարմարություններից զուրկ ձեղնահարկում: Ընտանիքը բնակբաշխման գործընթացից դուրս է մնացել միայն այն պատճառով, որ 2008 թվականին, անօթեւանների վերջին վերահաշվառման ժամանակ, Հերիքնազի մայրը գտնվել է կալանավայրում եւ հնարավոր չի եղել համալրել ընտանիքի անդամների պահանջվող փաստաթղթերի փաթեթն ու հերթագրվել:

«Քաղաքի տարբեր ծայրամասերում սփռված տնակային ավաններում եւ կիսախարխուլ շենքերում պատսպարված ընտանիքներում տիրող թշվառությունն ու այդ ամենի հանդեպ տիրող հանցավոր անտարբերությունը, անկեղծ ասած, նույնիսկ մեզ համար անտանելի են ու անհավատալի են թվում», ասում է «Շիրակ կենտրոնի» ղեկավար **Վահան Թումայանը**: Այդ համատարած անտարբերությունը հայ ընտանիքների, երեխաների կործանվող ճակատագրերի պատճառ է դառնում: Ըստ կենտրոնի հրապարակումների, տնակային ավանների աղքատ բնակչության շրջանում մեծ թիվ են կազմում փլուզված ընտանիքները: Վերջին տարիներին նկատվող եւս մեկ ցավալի երեւույթ է կանանց ու հատկապես միայնակ մայրերի Թուրքիա եւ Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնելու դեպքերի աննախադեպ աճը: Սովորաբար նրանցից շատերն այդ դեպքում իրենց մանկահասակ երեխաներին նախապես կամ տեղավորում են մանկատներում, կամ թողնում են տարեց տատիկների խնամքին:

Իրենց կացարանն այցելող «Շիրակ կենտրոնի» երիտասարդ աշխատակիցներին պատուհանից մի պահ նայած աղջնակի վեհերոտ հայացքը սիրտ էր ալեկոծում: Արդեն ներսում միջին տարիքի կինն ասում է, որ ինքը երեխաների տատիկն է: Երեխաները երկուսն են. աղջիկը հինգ տարեկան է, մյուսը՝ տղան, տասը: «Մեծ թոռս գիշերօթիկ կմնա, շաբաթ օրերը կբերենք, կիրակի էլ կմնա, երկուշաբթի կտանենք: Իրենց ես կպահեմ, մայրը Ռուսաստան է, Մոսկվա, գուլպա կգործե...»: Արդեն մեկ տարի է՝ Հռիփսիմեն գնացել է: Ամուսնալուծված է: Խոսակցությանը ներկա պառավ մի կին, երեւի դրկից հարեւանը, երեխաների հոր մասին էլ ասում է՝ Ուֆա է, այնտեղ իր համար ֆռֆռում է:

Տնակաբնակ երիտասարդ մի կին՝ Սոնան, ամուսին ունի, ամուսինը մեկ-մեկ գործ-մործ գտնում, բանվորություն է անում, բայց հիմա գործ չունի: Բնակարան ստանալու շահառու չեն, չեն կարողացել գոնե տնակը սեփականաշնորհել, որ տարածքն իրենցը լինի: Հիմա եկել, հարեւանի տանն է իրենց համար ճաշ եփում. իրենց գազն անջատված է, որովհետեւ ձմեռը վառածի դիմաց վաթսուն հազար դրամ պարտք են մնացել: Մի փոքրիկ աղջիկ ունեն, երկրորդ երեխային էլ սպասում է...

Այցելած մեկ այլ թիթեղյա տնակում բնակվող տարիքով կինը իր հետ ապրող երեսնամյա չամուսնացած որդի ունի եւ չորս աղջիկներ՝ վաղուց ռուսաստաններում աշխատելու մեկնած, իրենց համար... Հարցնում են՝ քեզ գոնե զանգում, փող, գումար ուղարկո՞ւմ են: «Չէ հա...օֆ»: Իսկ ինչո՞վ է ապրում: «Թոշակովս, ինչով: Մեկ-մեկ տղես էլ գործ կենե ըշտը...»:

Իսկ այս պատմությունը, որ կենտրոնի աշխատակիցները լսել են տնակային ավաններ այցելություններից մեկի ժամանակ, ասես նաեւ դառն զգուշացում լինի օտար ու մանավանդ ոչ բարեկամ երկրում բախտ որոնող մեր բազմաթիվ տարաբախտ հայրենակիցներին: «2002 թվականից իր մանկահասակ երեխային մոր խնամքին թողնելով, 24-ամյա միայնակ մայրը մեկնում է Թուրքիա՝ աշխատելու: Սկզբնական շրջանում կարծես գործերը վատ չեն ընթացել: Սակայն 2005-ին ծնողները լուր են ստացել, թե իրենց աղջիկն ավտովթարի է ենթարկվել եւ ծանր վիճակում գտնվում է Տրապիզոնի հիվանդանոցներից մեկում: Մայրը մեկնել է Թուրքիա... 23 օր հետո, գիտակցության չգալով, երիտասարդ կինը մահացել է: Սակայն նրա դին փաստաթղթերի բացակայության պատճառով չեն կարողացել տեղափոխել Հայաստան եւ հուղարկավորել են Տրապիզոնում: Թեեւ ծնողները եւս հակված են աղջկա ավտովթարի հետեւանքով զոհվելու վարկածին, սակայն նրանց հարեւանների եւ ճանաչողների պնդումներով՝ երիտասարդ կնոջը Տրապիզոնում սպանել են ինչ-ինչ պայմանավորվածություններ խախտելու պատճառով»...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Հացարտադրության մերօրյա առանձնահատկությունները

*3-րդ էջից*

Բոլոր այս հարցերը տնտեսագիտական ու տնտեսվարական բացատրության են կարոտ, որը, ցավոք, չի տրվում, լրատվամիջոցներն էլ դեպքից դեպք փորձում են իրենց դիտարկումները ներկայացնել, որոնք միանշանակ չեն ընդունվում: Որոշակի հաշվարկները պատկեր են ուրվագծում, ըստ որի ՀՀ-ում առանձին տարիներ արտադրված 300 հազար տոննա ցորենի բերքը կարող է ծածկել մեր ողջ տարվա հացի ու մակարոնեղենի պահանջը, եթե ստացված բերքը միայն այս նպատակին ծառայեցվի: Երկրում սպառվող 300 հազար տոննա հացի եւ շուրջ 40 հազար տոննա մակարոնեղենի համար ցորենի այդ քանակից ստացված ալյուրը գրեթե բավարար է:

Ըստ տողերիս հեղինակի հիմնականում սիրողական մակարդակով ներկայացվող դիտարկումների՝ վերջին տասնամյակում ՀՀ-ում հացի գնի բարձրացման հիմնական պատճառը ոլորտում գործունեություն ծավալող գործարարների հավելյալ շահույթի ստացումն է: Այն սկիզբ է առնում ալյուրի արտադրությունում, ուր արդեն հիշատակված գներով ձեռք բերված ցորենը վերածվում է տոննան 550-600 դոլար գնահատվող հացի հումքի: Ալյուրի այս քանակը միջինը 450-500 դրամ 1 կգ հացի գնով հասնում է 550-600 հազար դրամի, որն այսօրվա դրամ-դոլար համարժեքով կազմում է 1400-1500 դոլար: Հացարտադրության մեջ ներառված գործարար միջավայրը թե ցորենից ալյուր, թե ալյուրից հաց ստանալու գործընթացներում առաջնորդվում է 100 եւ ավելի տոկոս շահութաստացմամբ, որը հնարավոր չէ հիմնավորապես արդարացնել ոչ էներգակիրների եւ ոչ էլ աշխատավարձերի բարձրացումով: Տպավորություն է ստեղծվում, որ իշխանությունն իրեն պարզապես օտարել է տնտեսության առանցքային այս ոլորտից, ամեն ինչ թողնելով եւ վստահելով գործարար միջավայրին:

Այս մասին նշելով որեւէ ակնարկ չենք անում պետության կողմից հացարտադրության մասնակցության մասին, այլ ընդամենը ակնկալում ենք պետական կառույցների վարչարարական լծակների առավել կոնկրետ իրականացում հացի արտադրության ծավալների եւ դրանից գանձվող հարկերի հարցում: Վերջիններիս իրական պատկերը որեւէ առնչություն չունի դրանց այսօրվա իրողության հետ. 5-6 աշխատողների առկայության պայմաններում անգամ մի քանի հարյուր կիլոգրամի հասնող հացարտադրությունն ուղղակի անբացատրելի է: Հիմնական արդարացումն այն է, որ հացի արտադրության խոշոր ու մանր հզորություններն այնքան շատ են, որ յուրաքանչյուր հացարտադրող գործարար դժգոհում է դրա իրացումից: Բայց եւ տարօրինակ է, որ դժգոհելով հանդերձ ոչինչ չի ձեռնարկում անձամբ իր եւ ընտանիքի չաշխատող անդամների աշխատուժը օգտագործելու առումով: Ծանոթանալով տարբեր մայրցամաքների փորձին, որը կարելի է տանը նստած իրականացնել փոքր ու միջին բիզնեսի մասին պատմող տարբեր հեռուստաալիքների օգնությամբ, երբեմն էլ անմիջականորեն ծանոթանալով եվրոպացիների փորձին, համոզվում ենք, որ ամենուր համանման գործարարությամբ զբաղվողները, լինեն հացամթերքների, գինեգործության, պանրի արտադրության, ռեստորանային թե այլ ոլորտներում, բիզնեսի տերերը նաեւ հացթուխներ են, գինեգործներ ու պանրագործներ, անգամ շեֆ խոհարարներ:

Ավստրիայի 300 հազար բնակչություն ունեցող Գրաց քաղաքի հունական ռեստորանում հաճելի զգացում ունեցա, երբ այցելուներիս հետ ծանոթանալու ցանկություն հայտնեց մեզ սպասարկող 60-ն անց տղամարդը: Մեր հայերեն խոսակցությունը նրան հիշեցրել էր ծննդավայր Վանի հարեւաններին, որոնցից բաժանվել էր 1950-ականներին: Զրույցի ընթացքում ակնարկեց, որ 2 թեւերից բաղկացած ռեստորանը, ուր միաժամանակ կարող էին տեղավորվել 100-120 այցելուներ, իր սեփականությունն է: Մի այլ փաստ. 10 մլն բնակչություն ունեցող Փարիզի հաց-հացաբուլկեղենի պահանջարկը բավարարում են շուրջ 2000 փուռ-խանութները, որոնց տերերը տեղում աշխատողներ են, ովքեր երազում են իրենց տեսնում «Մերսեդես»-ներ եւ «Համեր»-ներ վարելիս:

«Մերն ուրիշ է»-ն իրոք ուրիշ է, որը, թող որ սխալվեմ, երբեք հայերիս արժանի հանգրվանի չի հասցնի: Հանրությունն այստեղ, այլ ոլորտների օրինակով, անելիք չունի, քանզի հանապազօրյա հացը իր առանձնահատկությունն ունի, որը ուզես թե ոչ, կարող ես թե ոչ, ճարահատյալի պարտադրվածությամբ պետք է գնես, քեզ զրկելով բազում այլ առաջնահերթություններից՝ փոքրիկին կաթնամթերք գնելուց, ծերերին դեղերով ապահովելուց, տունը մի փոքր ջեռուցելուց... Այստեղից էլ իշխանության հանդեպ հայ մարդու թերահավատությունից մինչեւ անվստահություն ձգվող զգացումը, որն առաջանում է երբեմն շատ պարզ ու տեսանելի գործընթացների հանդեպ ոչ բավարար ու անհրաժեշտ ձեռնարկումների իրականացման պատճառով:

ՄՈՍԿՎԱՅԻՑ

# «Հերիք է կերակրենք Թուրքիային»

«Ըստ «Ռոստուրիզմի» տվյալների՝ Թուրքիան առաջատար դիրք է գրավում ռուսաստանցիների հետ միջադեպերի ու պատահարների թվով: 2011 թվականի ընթացքում Թուրքիայում զոհվել է 42 ռուսաստանցի, 167 հոգի տուժել է ճանապարհատրանսպորտային վթարներից, 34-ը դատվել է տարբեր հոդվածներով, 41-ը արտաքսվել է երկրից, ոստիկանությունը կալանավորել է ավելի քան հարյուր մարդու: 1200-ից ավելի զբոսաշրջիկ բուժօգնության է դիմել թուրքական առողջավայրերում հանգստանալիս: Ռուսաստանցիների մահվան քանակով Թուրքիան առաջին տեղում է: Այս տարի այդ երկրում թունավորվել է 150-ից ավելի մարդ: Թուրքերի ռուսատյացությունը դրսեւորվում է հյուրանոցներում գռեհիկ սպասարկումից, փողոցներում սեքսուալ հետամտումներից մինչեւ տարադրամի կեղծման անհեթեթ մեղադրանքները: Ռուսաստանցի զբոսաշրջիկները թուրքերի համար «երկրորդ տեսակի» մարդիկ են: Մինչդեռ տարեկան 3 միլիոն ռուսաստանցի է այցելում Թուրքիա՝ դրանով իսկ այդ երկրին պարգեւելով ավելի քան 4 միլիարդ դոլար»:

Այս մեջբերումը սոսկ մի հատված է այն հայտարարությունից, որ արել է Ռուսական համայնքների կոնգրեսը Թուրքիայում ռուսաստանցիների նկատմամբ հաճախակի դարձած հիրավի խտրական վերաբերմունքի կապակցությամբ: Անշուշտ, խնդիրը բնավ էլ չի առնչվում հայերիս եւ հազիվ թե հարկ կա մտնելու մանրամասների մեջ: Ուրիշ հարց է, որ թուրքերը, մտնելով աշխարհի տնտեսապես առավել զարգացած 20 պետությունների շարքի մեջ, հավակնելով աշխարհաշրջանի առաջատար երկրի դերին, իրենց արդեն իրավունք են վերապահում արհամարհական վերաբերմունք ունենալ նույնիսկ այնպիսի տերության քաղաքացիների նկատմամբ, ինչպիսին Ռուսաստանն է:

Մյուս կողմից, հայերս իրավունք չունենք անտեսելու այն փաստը, որ Թուրքիան իրոք դինամիկ զարգացող պետություն է, տվյալ դեպքում թեկուզեւ մեր Հայաստանի համեմատ: Վերջին տասնամյակներում հատկապես, ի տարբերություն անկախ Հայաստանի, Թուրքիան ծնում է ազգային լիդերներ, որոնք գերազանցապես մտածելով պետության ու ժողովրդի շահերի (եւ ոչ թե անձնական հարստության) մասին, տնտեսական, ռազմական, մշակութային հսկայական առաջընթաց են ապահովում: Հիշյալ հայտարարության մեջ, օրինակ, «ցավով» արձանագրված էր, որ հենց միայն զբոսաշրջությունից Թուրքիան տարեկան ստանում է 25 միլիարդ դոլարի եկամուտ: Հեշտ է ասել՝ 25 միլիարդ... «Հերիք է կերակրենք Թուրքիային՝ գոռում են ռուս նացիոնալիստները՝ պիկետավորելով Մոսկվայում Թուրքիայի դեսպանատունը: Բայց դրանից էլ ոչինչ չի փոխվի: Թուրքերին հաջողվել է իրենց երկիրը դարձնել գրավիչ, եւ միլիոնավոր օտարերկրացիներ գալիս են այստեղ հանգստանալու եւ ժամանակ անցկացնելու: Եթե նույնիսկ նրանց մի մասի նկատմամբ չկա բարյացակամ վերաբերմունք: Պարզ չէ՞, թե այդ նույն ռուսները ինչու են իրենց Սոչին թողած մեկնում Անթալիա, ու հետո էլ դժգոհում:

Որպես ռուսաստանաբնակ հայ, կարող եմ ասել, որ Հայաստանն այստեղ չի դիտվում որպես հրապուրիչ զբոսաշրջական երկիր: Հայաստան հիմնականում գալիս են ռուսահայերը, եւ նրանք էլ դժգոհ են մնում անհարկի թանկությունից ու հատկապես սպասարկման «միջնադարյան» որակից: Իսկ գուցե թուրքերը քթերը ցցել են նաեւ այն իրողության բերումով, որ կարողացել են, կոնկրետ պարագայում, ստեղծել զբոսաշրջության արդյունավետ ու եկամտաբեր ենթակառուցվածք: Բայց չէ՞ որ սա թուրքական առաջադիմող էկոնոմիկայի սոսկ մի ճյուղն է:

Զբոսաշրջությունը թերեւս այն ոլորտը չէ, որ որեւէ ձեւով առնչվի ցեղասպանության թեմային: Սակայն առհասարակ այն տպավորությունն է ստեղծվում, որ մեր պահանջատիրության հարցում մենք թերագնահատում ենք ժամանակակից թուրքերին: Առնվազն տարօրինակ է, որ ինչքան Հայաստանը հետ է ընկնում իր տնտեսական (եւ ոչ միայն) զարգացման մեջ, ինչքան արագ է սեփական ապաշնորհության հետեւանքով հայաթափվում կոռուպցիայի մեջ թաթախված մեր երկիրը, այնքան ավելի բարձր ենք խոսում ցեղասպանության մասին:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Ադրբեջանում նոր սկանդալ է հասունանում

*1-ին էջից*

Մի քանի տարի առաջ էլ Հաջիեւը նման հայտարարություն արել էր, սակայն պաշտոնական մարմինները դրան որեւէ ուշադրություն չէին դարձրել: Այս անգամ իշխանությունների հետաքրքրվածությունը լիովին հասկանալի է՝ առջեւում նախագահական ընտրություններ են, իսկ Իլհամ Ալիեւի դեմ մրցակցել կարող են այն ուժերը, որոնց Հաֆիզ Հաջիեւը մեղադրում է Էլչիբեյին «թունավորելու» մեջ: Դրանք «Մուսավաթ» եւ ԱԺՃ կուսակցություններն են եւ այն հոսանքները, որ միավորվել են «Հանրային պալատ» կոչվող կառույցում:

Էլչիբեյը մահացել է օնկոլոգիական հիվանդությունից: Մահը վրա է հասել Անկարայի «Գյուլհանե» ռազմաբժշկական ակադեմիայում, որտեղ էլ կազմվել է համապատասխան բժշկական եզրակացություն: Դասական ժողճակատ կուսակցության առաջնորդ Միրալիօղլուն մեկն է Էլչիբեյի մտերիմներից, որ մինչեւ վերջին պահը եղել է նրա կողքին: Նրա հարցաքննությունը, ըստ այդմ, կարելի է նպատակային համարել, քանի որ Հաֆիզ Հաջիեւը պնդել է, որ Էլչիբեյին «թունավորել են նրա մերձավոր շրջապատի մարդիկ»:

Հաջիեւի մեղադրանքի սլաքը ուղղված է ԱԺՃ ներկայիս առաջնորդ Ալի Քերիմլիի դեմ, որը կուսակցությունում ունեցել է «Կոմսոմոլ» մականունը: Ըստ Հաջիեւի, Էլչիբեյը ասել է, որ իրեն «Կոմսոմոլն» է թունավորել: Մի քանի օր առաջ Բաքվի դատախազությունը հանդես էր եկել հայտարարությամբ, ըստ որի՝ «էքս-նախագահ Էլչիբեյի աճյունը արտաշիրմելու հարցում նրա հարազատների համաձայնությունը պարտադիր չէ»:

«Հարազատներն իրենց ցանկությամբ կարող են ներկա գտնվել աճյունի արտաշիրմմանը», ասել է դատախազության ներկայացուցիչը: Խնդիրը խճճվում է այնքանով, որ Էլչիբեյի եղբայրը հանդես է գալիս արտաշիրման օգտին, մինչդեռ կինը, որդին եւ փեսան հակառակ կարծիքի են: Նման իրավիճակում Դասական ժողճակատ կուսակցության առաջնորդի հարցաքննությունը կարող է խիստ շրջադարձային լինել: Այն է՝ չի բացառված, որ իշխանությունները հենց նրա ցուցմունքները կարող են համարել բավարար հիմք, որպեսզի կայացվի արտաշիրման որոշում:

Այս դեպքում չի կարելի անտեսել նաեւ մեկ այլ հանգամանք: Ինչպես հայտնի է, Թուրքիայի էքս-նախագահ Օզալի աճյունը արտաշիրմելու որոշում եւս կայացվել է: Տարածված վարկածի համաձայն՝ Օզալին թունավորողը «գտնվում է Ադրբեջանում»: Էլչիբեյն, ինչպես ասացինք, մահացել է Անկարայի «Գյուլհանե» ռազմաբժշկական ակադեմիայում: Եվ եթե «թունավորելու միջոցով նրա մահն արագացվել է», ապա դա պետք է «տեղի ունեցած լինի» Թուրքիայում: Այսինքն, Էլչիբեյին «թունավորողն էլ գտնվում է Թուրքիայում»:

Այս կերպ Ադրբեջանի իշխանությունները, եթե Օզալի մահվան հետքերը տանեն դեպի Բաքու, կարող են հակակշիռ ստեղծել՝ Էլչիբեյի «թունավորման» հետքերը տանելով դեպի Անկարա: Ո՞վ էր շահագրգռված Օզալի մահվան մեջ: Դա Էլչիբեյը լինել չէր կարող: Բայց Էլչիբեյի մահով շահագրգռվածի անունը ստույգ է՝ Հեյդար Ալիեւ: Ահա եւ ստացվում է մի իրավիճակ, երբ ադրբեջանական ընդդիմությունը կարող է «պայթեցնել» Օզալի մահվան թեման: Իսկ իշխանությունը նրան փորձում է լռեցնել Էլչիբեյի աճյունը արտաշիրմելու եւ դատաբժշկական «նոր փորձաքննություն» անցկացնելու սպառնալիքով: Միաժամանակ, Թուրքիան է Ադրբեջանին «մեղադրում» Օզալի մահվան մեջ, ինչին Բաքուն հակադարձում է՝ Էլչիբեյին «թունավորելու գործողությունը» հասցնելով Անկարայի «Գյուլհանե» ռազմաբժշկական ակադեմիա:

Տարբերակներից ո՞րը կգործի՝ կախված է իրավիճակից: Նայած, թե ով առաջինը կսկսի բացահայտումներ անել՝ Թուրքիա՞ն, թե՞ Ադրբեջանը: Ադրբեջանի ընդդիմությո՞ւնը, թե՞ իշխանությունները: Նախաձեռնությունն առայժմ վերջիններիս ձեռքերում է: Բայց ի՞նչ երաշխիք, որ հասունացող սկանդալը չի «պայթեցնի» հիմնավորապես անկյուն քշված ընդդիմությունը:

**Վ. Ա.**

ՀԱՄԱՌՈՏ

## Սիրիայում զինադադար այդպես էլ չհաստատվեց

**«Ազգը» հոկտեմբերի 27-ի համարում գրել էր, որ Սիրիայում զինադադար հայտարարվեց, բայց չհաստատվեց, քանզի խախտումներ կատարեցին թե՛ կառավարական զորքերը եւ թե՛ ապստամբները:**

**Հոկտեմբերի 29-ին՝ հայտարարված զինադադարի 3-րդ օրը, իրավիճակը չէր փոխվել: Ֆրանսպրեսը, սիրիացի իրավապաշտպաններին վկայակոչելով, հայտարարում է, որ երեկ Սիրիայում սպանվել է առնվազն 99 մարդ: Սպանվածներից 35-ը կառավարական զորքերի զինվորներ են, 34-ը՝ ապստամբներ, 30-ը՝ խաղաղ քաղաքացիներ: Վերջիններիս մեծ մասը զոհվել է Իդլիբի նահանգում (հյուսիսային մուտք) օդուժի գրոհի ժամանակ:**

**Ժամանակավոր զինադադարը հայտարարվել էր հոկտեմբերի 26-29, երբ մահմեդականները նշում են զոհաբերության տոնը (Կուրբան-բայրամ): Զինադադարի համաձայնությունը ձեռք էր բերվել Սիրիայում ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Լախդար Բրահիմիի միջնորդությամբ:**

## Ընդհատակյա միլիոնատերերի ցանկը հրապարակած հույն լրագրողը ձերբակալվել է



**Հունաստանի ոստիկանությունը ձերբակալել է հայտնի լրագրող, Hot Doc հանդեսի հրատարակիչ Կոստաս Վաքսեւանիսին, որը հրապարակել էր արտերկրում պատկառելի հաշիվներ ունեցող հույների ցանկը: Տվյալ փաստաթուղթը Հունաստանում ստացել է «Լագարդի ցուցակ» անվանումը՝ ի պատիվ ավելի վաղ այն Հունաստանի իշխանություններին հանձնած Ֆրանսիայի ֆինանսների նախարար Քրիստիան Լագարդի, որը ներկայումս ԱՄՀ կարգադրիչ տնօրենն է:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով՝ ցանկում կա մոտ 2000 անուն: Այդ անձանց մեծ մասը գործարարներ են եւ քաղաքական գործիչներ (նրանց մեջ է Հունաստանի խորհրդարանի նախագահը), ինչպես նաեւ դերասաններ, ճարտարապետներ, բժիշկներ եւ լրագրողներ: Նրանք բոլորը 2007-ին հաշիվներ են ունեցել HSBC բանկի շվեյցարական բաժանմունքում:**

**Օրերս Վաքսեւանիսի հանդեսում տպագրված ցանկում ճշգրիտ գումարներ չեն նշվում, բայց հաղորդվում է, որ ոմանց հաշիվներում եղել է մինչեւ 500 մլն եվրո: Ըստ որում, այդ ընդհատակյա միլիոնատերերից շատերին կասկածում են հարկերի վճարումից խուսափելու մեջ:**

**Լրագրողին ձերբակալեցին իր տանը, ցանկի հրապարակման հաջորդ օրը: Նրան ամբաստանում են անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելու մեջ:**

**Լրագրողը տարակուսանքի մեջ է, թե ինչու ոստիկանությունը իրեն ձերբակալեց հարկատվությունից խուսափողներին հետապնդելու փոխարեն:**

**«Լագարդի ցուցակը» Հունաստանի իշխանություններին փոխանցվել էր դեռ երկու տարի առաջ, բայց մինչեւ օրս դրա հիման վրա ստուգումներ չէին անցկացվել: Բուն Հունաստանի տարածքում չեն կարողանում ցանկը գտնել, եւ իշխանությունները Ֆրանսիային խնդրել են մեկ անգամ եւս ուղարկել այն:**

**Հայտնի չէ, թե Վաքսեւանիսը ում միջոցով էր հայթայթել այդ ցանկը: Երեկ նրան առաջին անգամ կանչել էին հարցաքննության: Ավելի վաղ՝ անցյալ շաբաթ երկրի խորհրդարանում նույն գործով հարցաքննության էին ենթարկվել երկրի ֆինանսների երկու նախկին նախարարներ:**

## Ուկրաինայի ընտրություններում առաջատարը Յանուկովիչի կուսակցությունն է



Ուկրաինայում կիրակի օրն անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքների հիման վրա 5 տարի ժամկետով պետք է ընտրվեն 450 պատգամավորներ, կեսը՝ կուսակցական ցուցակներով, մյուս կեսը՝ ըստ մեծամասնական օկրուգների: Կուսակցական ցուցակներով խորհրդարան անցնելու նվազագույն ցուցանիշը 5 տոկոս է: Մեծամասնական կարգով հաղթող է ճանաչվում ամենաշատ քվեներ ստացած թեկնածուն:

Երեկվա տվյալներով՝ մշակվել էր բոլոր արձանագրությունների 41,41 տոկոսը: Ընտրությունների վերջնական արդյունքները հայտնի կդառնան հոկտեմբերի 31-ին: Իսկ առայժմ առաջատարը նախագահ Վիկտոր Յանուկովիչի Տարածաշրջանների կուսակցությունն է, որը ստացել է մշակված քվեների 35,44 տոկոսը: Երկրորդ տեղում Միացյալ ընդդիմությունն է՝ 21,55 տոկոս: Կոմկուսը ստացել է 15,04 տոկոս, Ուկրաինայի բարեփոխական ժողովրդավարական դաշինքը՝ 12,87 տոկոս, ազգայնական «Ազատություն» կուսակցությունը՝ 8,14 տոկոս:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցողների 57,99 տոկոսը: Անկախ Ուկրաինայի պատմության մեջ առաջին անգամ ընտրական տեղամասերում տեղադրվել էին տեսախցիկներ: Քվեարկության ընթացքին հետեւում էին 3797 դիտորդներ 28 պետություններից եւ 35 միջազգային կազմակերպություններից:

# Մշակույթ

ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

## Անիմացիոն տոն տեղի կունենա շուտով




Անիմացիոն տոն տեղի կունենա Երեւանում նոյեմբերի 3-9, քանի որ մեկնարկում է «ՌեԱնիմանիա» միջազգային անիմացիոն 4-րդ կինոփառատոնը: Բացումը տեղի կունենա ֆրանսիական անիմացիոն «Նկարը» ֆիլմի պրեմիերայով:

Անիմացիայի սիրահարներին հնարավորություն կընձեռվի ֆիլմերը դիտել ինչպես դահլիճում, այնպես էլ բացօթյա պայմաններում՝ Սիրահարների այգում:

Մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետի տեղակալ **Արամ Գյուրջյանը**, անդրադառնալով փառատոնին, ասաց. «Մշակույթի նախարարության համար այս փառատոնը պարզապես մշակութային միջոցառում չէ, այլ շատ լուրջ ռազմավարական հենակետ՝ պետական մշակութային քաղաքականության իրականացման գործընթացում: Այս նախաձեռնությունը Հայաստանի համար շատ կարեւոր է, քանի որ ինչպիսի մուլտֆիլմեր այսօր կստեղծվեն, կներկայացվեն ամենապահանջկոտ հանդիսատեսին՝ երեխաներին, այդպիսի հասարակությունում մենք կապրենք վաղը»:

Այս տարի փառատոնը հյուրընկալում է անիմատորների Բրազիլիայից, Գերմանիայից եւ Ռուսաստանից, որոնք տեղական ժյուրիի հետ կորոշեն այս տարվա հաղթող ֆիլմերը, ինչպես նաեւ կանցկացնեն սեմինարներ ու վարպետության դասընթացներ:

Այս տարի փառատոնին ներկայացվել է մոտ 400 ֆիլմ՝ աշխարհի չորս տասնյակից ավելի երկրներից: Նշենք, որ Ֆիլմերը կցուցադրվեն «Մոսկվա» եւ «Նաիրի» կինոթատրոններում, «Նարեկացի» մշակութային կենտրոնում, ինչպես նաեւ Հենրիկ Մալյանի անվան թատրոնում, Խնկո Ապոր մանկական գրադարանում, «Բուրբոն» ակումբում, «Թումո» կենտրոնում եւ «Այբ» կրթահամալիրում:

«ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատոնի հիմնադիր **Վրեժ Քասունին** այս տարվա փառատոնը հաղթանակած է համարում նրանով, որ աշխարհի ամենամեծ փառատոներից «Անսիի» տնօրեն Տիցիանա Լոսքին արդեն դարձել է «ՌեԱնիմանիայի» խորհրդի անդամ, ինչպես նաեւ «Էքսոլիուս»-ի տնօրեն Մաքս Հաուարդը, իսկ խորհրդի երրորդ անդամը Շոտլանդիայի միջազգային անիմացիոն կինոփառատոնի տնօրեն Սուզի Վիլսոնն է. «Այս տարի առաջին անգամ կմեկնարկի Work-in-Progress ծրագիրը, որը հայ անիմացիոն գործիչներին հնարավորություն կընձեռի ներկայացնել իրենց նոր, ինչպես նաեւ անավարտ աշխատանքները եւ գտնել ֆինանսավորողներ, որոնք կօգնեն ավարտին հասցնել իրենց աշխատանքը»:

Կինոփառատոնի հիմնադիրը, ամփոփելով անցած 3 տարիները, ասաց, որ կազմակերպած վարպետության դասընթացներին մասնակցել է 175 երիտասարդ, 11-ը մեկնել է արտասահման, 5-ը մասնակցելու է Տալլինի անիմացիոն փառատոնին, իսկ 5 երիտասարդ մեկնել է Գերմանիա՝ Շտուտգարտի անիմացիոն փառատոնին»:

«ՌեԱնիմանիա» փառատոնի գեղարվեստական ղեկավար Լուսինե Քասարջյանն էլ իր հերթին ներկայացրեց կինոփառատոնի ծրագրերը. «Ունենք 6 մրցութային ծրագիր՝ լիամետրաժ, կարճամետրաժ, ավարտական, երաժշտական, հեռուստատեսային գովազդ, ինչպես նաեւ մանկական ընտրություն: Փառատոնը համագործակցում է նաեւ Խնկո Ապոր գրադարանի հետ, որտեղ կցուցադրվեն մանկական ֆիլմերը:

Հատկանշական է, որ փառատոնի շնորհիվ նախորդ տարիներին Երեւան են ժամանել աշխարհահռչակ այնպիսի մարդիկ, ինչպիսիք են «Ուորներ Բրադերս» լիամետրաժ անիմացիոն ֆիլմերի ստուդիայի նախկին նախագահ եւ «Դիսնեյ» լիամետրաժ անիմացիոն ֆիլմերի ստուդիայի փոխնախագահ Մաքս Հաուարդը, որը «ՌեԱնիմանիա»-ի խորհրդի նախագահն է, Անսիի անիմացիոն փառատոնի տնօրեն Տիցիանա Լոսքին, «Շտուտգարտի» փառատոնի տնօրեն Ուլրիխ Վեգենաստը, հայտնի անիմատորներ իտալացի Ֆեդերիկո Վիտալին, ֆրանսիացի Միշել Օսելոն, եգիպտացի ամենահայտնի կին-անիմատոր Շվեյքեր Խալիֆան, ճապոնացի անիմատոր Յոշիհարու Աշինոն, անիմատորներ Բրազիլիայից, Թուրքիայից, Ֆինլանդիայից, Իտալիայից եւ այլուր:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

## Հավերժող ժողովրդի մեջ ու նրա շարքերում

«ՎՄՎ-պրինտ» ՍՊԸ հրատարակչության տպարանը ընթացիկ տարում (2012 թ.) հրատարակել է բանաստեղծ, թարգմանիչ Աշոտ Գրաշու (Աշոտ Բաղդասարի Գրիգորյան) «Արի՛ գնանք Ղարաբաղ» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն՝ 430 էջ ծավալով: Գրախոսվող գիրքն իրավամբ կարելի է դասել բարձրորակ տպագրության օրինակների շարքը: Գրքի տպագրությունը հովանավորել են Աշոտ Գրաշու եղբորորդի, Երեւանի պետական համալսարանի դասախոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Գրիգորյանը եւ իր զավակներ Ռուբեն եւ Աննա Գրիգորյանները: Ժողովածուն կազմել, ծանոթագրել, խմբագրել, «Խմբագրի կողմից» (էջեր 9-20) խոսքը գրել է անվանի հրապարակագիր, լրագրող Վանիկ Սանթրյանը:

Բանաստեղծությունների սույն ժողովածուն սկսվում է Աշոտ Գրաշու «Անուշ Հայաստան» ձոներգով, որի վերջին քառատողում ասվում է.

*Դու ծառաստան ես,*
*ես ծառ զարունքիդ,*
*Նվագարան ես,*
*ես լար զարունքիդ,*
*Նոր երգարան ես,*
*ես բառ զարունքիդ,*
*Հազար մի երգից*
*անո՛ւշ Հայաստան:*

Այս տողերը հնչում են իբրեւ բնաբան եւ խորհրդանշում գրախոսվող ժողովածուի բովանդակությունը, դրսեւորում Աշոտ Գրաշու ազգասիրական, հայրենասիրական վսեմ զգացումները:




Այնուհետեւ հաջորդում է Ավետիք Իսահակյանի գնահատանքի խոսքը, ուր ասվում է. «Աշոտ Գրաշու իսկական էությունը քնարերգությունն է: Նա գերազանցապես քնարերգու է, որն արդեն ձեռք է բերել իր սեփական ձայնը: Գրաշու երգերը հագեցված են հուզական անմիջականությամբ, երիտասարդական թարմությամբ, կենսուրախությամբ» (էջ 6): Վարպետն իր խոսքում բնութագրում է Աշոտ Գրաշու քերթվածների կարեւոր հատկանիշները՝ հակառակ անցյալ դարի 50-ական թվականների աչառու առանձին քննադատների:

«Խմբագրի կողմից» վերտառությամբ խոսքում (էջեր 9-20) Վանիկ Սանթրյանը նշում է, որ ինքը 2000 թ. կազմել եւ հրատարակել է Աշոտ Գրաշու «Իմ Ղարաբաղի կապույտ լեռներում» խորագրով գիրքը՝ նվիրված գրողի ծննդյան 90-ամյակին: Այդ գրքի տպագրական ծախսերը դարձյալ հոգացել եւ նյութերը տրամադրել էր Գրաշու եղբորորդին՝ Յուրի Գրիգորյանը: «Անցյալ տարի դարձյալ առաջարկ եղավ որեւէ կերպ նմանատիպ նախաձեռնություն ցուցաբերել գրողի ծննդյան 100-ամյակի առթիվ, եւ Յուրին ինձ տրամադրեց մի հաստափոր թղթապանակ՝ մոտ 800 էջ...» (էջ 9): Եվ գրախոսվող «հատորը հիմնականում պատրաստված է այդ ժողովածուի հիման վրա» (էջ 10):

Սանթրյանը, իհարկե, բացի տրամադրված ժողովածուի նյութերից, նոր գրքում զետեղել է նաեւ Գրաշու այլ ստեղծագործություններ եւ ընթերցողին ներկայացրել մի ընտրանի՝ գեղագիտական առինքնող շնորհներով առլեցուն: Վ. Սանթրյանը նորովի է գնահատում ու արժեւորում Աշոտ Գրաշու քնարերգությունը՝ հակադրվելով ստալինյան ժամանակների գրական վայ քննադատներին, որոնք գրական եւ ոչ գրական մամուլի էջերում աղմուկ-աղաղակ էին բարձրացնում, թե «սոցիալիստական իրականության գովերգումը թողած, Աշոտ Գրաշին իր Ղարաբաղի հավքերի ու եղնիկների... աշուղությունն է անում»: «Վստահ կարող եմ ասել,- գրում է Վ. Սանթրյանը,- որ Գրաշին նույնպես մասնակիցն է Ղարաբաղի ազատագրական պայքարի, քանզի ամենամռայլ տարիներին անգամ բանաստեղծը չի վարանել ու իր գրչով նվաճել է... Ղարաբաղը, եւ ընթերցողը դա կտեսնի այս գրքում» (էջ 13): Եվ իրավացի է Վ. Սանթրյանը. Գրաշին երգում էր Արցախը, շքեղ պատկերներով անձնավորում էր Արցախի անզուգական բնությունը, նրա հողն ու ջուրը, որ արցախցին ամուր կառչի իր արմատներին եւ պահի ու պահպանի իր հայեցի ինքնությունը, հայրենի եզերքը: Եվ ազգային-ազատագրական պայքարի գաղափարները, իր հողին ամրորեն կառչելը, ինչ խոսք, ակունքվում էին նաեւ Գրաշու, Բոգդան Ջանյանի, Բագրատ Ուլուբաբյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Հրաչյա Բեգլարյանի, Լեոնիդ Հուրունցի, Վարդան Հակոբյանի եւ բնիկ արցախցի այլ գրողների, հասարակական-քաղաքական, մշակույթի գործիչների ստեղծագործություններից: Այլապես Արցախյան գոյապայքարը շարունակական ընթացք ու թափ չէր ստանա եւ չէր ավարտվի փառահեղ հաղթանակով, որի տրամաբանական հետեւանքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումն է, որ գնալով զարգանում է, արմատավորում ժողովրդավարության կենարար սկզբունքները:

Վանիկ Սանթրյանի վերլուծական եւ Աշոտ Գրաշու անցած ուղին ու քնարերգությունը բնութագրող խոսքին հաջորդում են ժողովածուի տասնմեկ բաժինները, որոնք վերնագրված են Գրաշու տարբեր քերթվածներից քաղված արտահայտություններով՝ «Ռուսական աղբյուր», «Սիրո արահետներով», «Ես երգում եմ իմ երկիրը հարազատ», «Դեպի հայրենի հանգրվան», «Երգեր եղբայրության», «Պատերազմի օրագրից», «Իմ մանկության վայրերում», «Մայրական», «Սարերի սրինգը», «Երգի թեւերին», «Արի՛ գնանք Ղարաբաղ»: Վերջինս միաժամանակ ժողովածուի ընդհանրական խորագիրն է: Այդ վերնագիր-արտահայտությունները բացահայտում ու ներկայացնում ժողովածուի թեմատիկ եւ գաղափարական բովանդակությունը:

Աշոտ Գրաշու բանաստեղծական ներշնչանքի հորդահոս աղբյուրն սկիզբ է առնում հայրենի Թաղավարդ գյուղից, ամբողջանում դալարագեղ ու մարգարտահյուս Արցախական աշխարհով, Մայր Հայաստանով, մայրաքաղաք Երեւանով, համայն հայության բախտով ու ճակատագրով, լուսավոր ու խաղաղ գալիքի նկատմամբ հաստատուն հավատով: Գրաշին հոգու բոլոր թելերով ագուցված ու ձուլված է Հայոց աշխարհին. նա նրա մի ոստն է, անբաժան բեկորը՝ միշտ ու հավիտյան... Խորն է տաղանդավոր քնարերգուի հավատը Հայաստան երկրի գալիքի նկատմամբ.

*Դու եղի՛ր հավերժ,*
*հավերժ երջանիկ,*
*Քեզ չեն սասանի*
*մրրիկները մառ,*
*Ես, լո՛ւյս Հայաստան,*
*իմ մա՛յր հայրենիք,*
*Կապրեմ, կմեռնեմ*
*միայն քեզ համար:*

Վերը նշված բաժինների բանաստեղծություններում Աշոտ Գրաշին գեղարվեստական ինքնատիպ պատկերավորման ու արտահայտչական միջոցներով, բանաստեղծական ուրույն պատկերներով երգում, փառաբանում է ժողովուրդների բարեկամությունը, Հայաստան-Ռուսաստան բարեկամական կապերը, հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց, հայրենաբաղձ սփյուռքահայերին, հայրենի երկիր ներգաղթողներին, մայրական խորունկ ու քաղցր սերը, մանկության եդեմական վայրերը Արցախի, մարդկային ազնիվ ու առաքինի հատկանիշները: Գրաշին չի մոռանում նաեւ Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին, հաղթանակով վերադարձածներին:

Կարդալով ժողովածուի բազմաբնույթ քերթվածները՝ ընթերցողն ինքը կստանա հոգեղեն բավականություն եւ կտոգորվի գեղագիտական խոր զգացումներով: Հենց բանաստեղծական շողշողուն խոսքի, պատկերների ինքնատիպությունը, քնարականությունն են, որ Աշոտ Գրաշու բազմաթիվ ստեղծագործություններ (200-ից ավելի) երգեր են դարձել հայ կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Ալեքսեյ Հեքիմյանը եւ ուրիշները: Հիշենք, օրինակ, «Ազգ իմ փառապանծ», «Բարով արագի՛լ, բախտի արագիլ», «Երեւանի գիշերները կապուտակ», «Գարուն Երեւան, սիրուն Երեւան» եւ այլ տարածված անուշ երգերը, որոնք հարստացրել են հայ ազգային երգարվեստը:

Ժողովածուի վերջին բաժինն ունի «Արի՛ գնանք Ղարաբաղ» վերնագիրը, որը, հիրավի, խորհրդանշում է Արցախ աշխարհի հյուրընկալ ու հյուրասեր ոգին: Հենց այդ բնաբուխ ազգային հատկանիշն է նկատի ունեցել Գրաշին, երբ, նկարագրելով Ղարաբաղի գարնանային ծաղկածիծաղ բնությունը, իր կենդանության օրոք եւ իր հավերժող բանաստեղծությամբ մշտական հրավեր է կանչել՝ «Արի գնանք Ղարաբաղ»: Ահա՛ այդ հավերժող բանաստեղծության վերջին քառատողը.

*Նա ոսկելար քնարն է իմ,*
*Անգին մայրը եւ հայրն է իմ,*
*Քնքուշ քույրը, եղբայրն է իմ,*
*Արի՛ գնանք Ղարաբաղ:*

Ժողովածուն ավարտվում է Վանիկ Սանթրյանի «Բանաստեղծին մի՛ սպանեք», որ գրել է Աշոտ Գրաշու ծննդյան 90-ամյակին նվիրած, դարձյալ իր կազմած (2000 թ.) ժողովածուի առիթով, «Նշվեց հայրենի գյուղում» (խոսքը վերաբերում է Աշոտ Գրաշու հայրենի գյուղին՝ Թաղավարդին, ուր նույնպես նշվել է բանաստեղծի 90-ամյակը), «Աշոտ Գրաշի. կապույս լեռների ու պաղ աղբյուրների երգիչը» (ծննդյան 100-ամյակի առթիվ, «Գրական թերթ», 2010 թ. մայիսի 26), «Փոքր գրադարան՝ հայրենի գյուղի դպրոցին», «Միջոցառում Թաղավարդում» վերնագրերը կրող հրապարակագրություններով, որոնց մեջ դրսեւորվում են Գրաշու քնարերգության իրական արժեքն ու բովանդակությունը, նրա մարդկային կերպարի սքանչելի հատկանիշները:

Գրախոսվող ժողովածուում առաջին անգամ զետեղվել են Մարտիրոս Սարյանի, Դիմիտրի Նալբանդյանի, Մինաս Ավետիսյանի, Գեւորգ Գրիգորյանի (Ջիոտտոյի) նկարչական գործերը՝ Աշոտ Գրաշու դիմանկարները, որոնք մի առանձին շուք են պարգեւում ժողովածուին: Զետեղված են նաեւ հարազատների մի քանի նկարներ:

Աշոտ Գրաշին, որ իր ստեղծագործությունների կշռույթով ու ազգային խոր բովանդակությամբ, ազգասիրական, հայրենասիրական քնարերգությամբ ու հայեցի ոգով (այդպիսին է նաեւ գրախոսվող ժողովածուն), թարգմանական բազմաթիվ գործերով հարստացրել է հայ գրականությունն ու երգարվեստը, ներկայացրել բանաստեղծական պատկերների մի ինքնատիպ համակարգ, միշտ իր հավերժող ժողովրդի մեջ է, նրա ոգորումների ու ազատասիրական ձգտումների առաջավոր դիրքերում:

**ՌՈՄԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ**

# Առաջատարներն ամրապնդում են դիրքերը


ՖՈՏՈԼՈՒՐ

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 27-րդ տուրում իրենց հերթական հաղթանակները տոնեցին չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդներ «Միկան» եւ «Շիրակը»: «Միկան» սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Փյունիկին»: Առաջնության առաջատարի համար ճաշ արդյունավետ ստացվեց 1-ին խաղակեսի վերջնամասը: 39-րդ րոպեին ձախ թեւից Աղվան Մկրտչյանի փոխանցումը դիպուկ հարվածով եզրափակեց «Միկայի» հարձակվող Նարեկ Բեգլարյանը: 3 րոպե անց անհատական բարձր վարպետությամբ աչքի ընկավ Վարդգես Սաթումյանը՝ խփելով 2-րդ գոլը:

Ընդմիջումից հետո «Փյունիկը» զգալիորեն ակտիվացավ ու սկսեց սպառնալ մրցակցի դարպասին: Վտանգավոր մի քանի պահերից հյուրերն օգտագործեցին միայն մեկը: 72-րդ րոպեին Դավիթ Մանոյանը կրճատեց հաշիվը: Ավելին անել «Փյունիկին» չհաջողվեց: Հերթական հաղթանակը տոնելով, «Միկան» ճարունակեց միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Ժոլտ Հոռնյակ** («Միկա»)-Անկախ կազմից, «Փյունիկը» մշտապես ուժեղ մրցակից է յուրաքանչյուր թիմի համար: Ուստի ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տղաներիս լավ խաղի համար ու շնորհավորել հաղթանակի առթիվ: Առաջին խաղակեսի վերջնամասում թիմը ցույց տվեց իր լավագույն խաղը: Ափսոս միայն, որ Նարեկ Բեգլարյանը չիրացրեց գոլային ճաշ հարմար պահը: Ընդմիջումից հետո «Փյունիկը» փոխարինումների շնորհիվ զգալիորեն վերակենդանացրեց թիմային գործողություններն առջեւի գծում եւ մի քանի անգամ սպառնաց մեր դարպասին: Սակայն մեզ հաջողվեց պահպանել հաղթական հաշիվը: Ցավոք ծանր վնասվածք ստացավ Արեգ Ազատյանը: Մեր 3 փոփոխություններն էլ ստիպողական էին: «Միկան» այս խաղում էլ բնավորություն դրսեւորեց:

**Սուրեն Չախալյան** («Փյունիկ»)-Շնորհավորում եմ «Միկային» հաղթանակի առթիվ: Մենք 2 տարբեր խաղակեսեր անցկացրինք: Առաջինում թիմը վատ խաղաց ու դրա արդյունքում 2 գոլ բաց թողեց: 2-րդում տղաներն ավելացրին, գոլային պահեր ստեղծեցին, բայց պարտությունից չկարողացան խուսափել:

«Շիրակն» էլ Գյումրիում վստահ հաղթանակ տոնեց «Գանձասարի» նկատմամբ՝ 2-0: Խաղասկզբում Անդրանիկ Բարիկյանը հստակ իրացրեց 11 մ հարվածը, իսկ 2-րդ խաղակեսում Ֆոֆանա Բեկոն կրկնապատկեց հաշիվը: «Շիրակը» ճարունակում է հետապնդել «Միկային», որից մեկ խաղ պակաս է անցկացրել, իսկ կորցրած միավորներով հավասարվել է առաջատարին:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում առաջնության 2 հետնապահների՝ «Արարատի» եւ «Բանանցի» մրցավեճն Աբովյանում: Վերջին շրջանում իր խաղը զգալիորեն կարգավորած եւ վերելքով հանդես եկող «Արարատը» կարեւոր հաղթանակ տոնեց: Հանդիպման ելքը վճռեց խաղասկզբում արարատցի Ավետիք Կիրակոսյանի խփած միակ գոլը: «Արարատը» 3 միավորով առաջ անցավ «Բանանցից»:

Վերջին հանդիպումներում անհաջող է խաղում «Իմպուլսը», որն «Ուլիսի» հետ խաղում 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց: «Ուլիսը» դեռեւս առաջին խաղակեսում Արտակ Գրիգորյանի եւ Արսեն Բալաբեկյանի ջանքերով 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը: «Իմպուլսին» միայն խաղավերջում հաջողվեց կրճատել հաշիվը՝ 2-1: Աչքի ընկավ առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանը՝ խփելով 15-րդ գնդակը:

Խաղի մասին մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Կարեն Բարսեղյան** («Ուլիս»)-Բավականին հետաքրքրական խաղ ստացվեց, որը կարելի է 2 մասի բաժանել: Առաջին խաղակեսում մենք ունեցանք գոլային պահեր եւ օգտագործեցինք դրանք: 2-րդ խաղակեսում թիմը հետ քաշվեց, ուներ լավ հակագրոհներ կազմակերպելու հնարավորություններ, սակայն չօգտագործեցինք ու կարող էինք նույնիսկ ձեռքից բաց թողնել հաղթանակը: Ամեն դեպքում շնորհակալ եմ տղաներին: Այս խաղում հոգեբանական խնդիր կար եւ հուրախություն մեզ, այն հաղթահարեցինք:

**Արմեն Գյուլբուդաղյանց** («Իմպուլս»)-Արդեն մի քանի խաղ է, ինչ նույն կերպ ենք խաղում. գոլային պահեր ենք ստեղծում ու չենք իրացնում: Փոխարենը հեռու տարածություններից հարվածներով գոլեր ենք ընդունում: Թեեւ 2-րդ խաղակեսում համեմատաբար լավ խաղացինք, սակայն դա բավարար չէր պարտությունից խուսափելու համար: Կաշխատենք ճիշտ հետեւություններ հանգել:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 26 | 18 | 4 | 4 | 43-24 | 58 |
| 2. Շիրակ | 25 | 17 | 4 | 4 | 44-24 | 55 |
| 3. Իմպուլս | 26 | 11 | 5 | 10 | 42-41 | 38 |
| 4. Փյունիկ | 25 | 11 | 3 | 11 | 44-36 | 36 |
| 5. Գանձասար | 25 | 9 | 7 | 9 | 26-22 | 34 |
| 6. Ուլիս | 26 | 8 | 5 | 13 | 31-36 | 29 |
| 7. Արարատ | 26 | 6 | 2 | 18 | 20-51 | 20 |
| 8. Բանանց | 25 | 3 | 8 | 14 | 24-40 | 17 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 15 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 12 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 10 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 10 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 9 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 9 |

# Ուիլյամսի արգելքն այս անգամ էլ չհաղթահարվեց



Ստամբուլում իրենց մրցավեճն ավարտեցին թենիսիստուհիները, որոնք վիճարկում էին աշխարհի ոչ պաշտոնական չեմպիոնուհու տիտղոսը: Եզրափակիչում գլխավոր մրցանակի համար պայքարում հանդիպեցին մշտական մրցակցուհիներ Մարիա Շարապովան եւ Սերենա Ուիլյամսը: 2 թենիսիստուհիներն էլ ճաշ վստահ էին անցկացրել նախորդ հանդիպումները: Ամերիկացի թենիսիստուհին ոչ մի խաղափուլ չզիջեց մրցակցուհիներին՝ վստահ հաղթանակներ տոնելով Անգելիկա Կերբերի, Լի Նայի, Վիկտորիա Ազարենկոյի եւ Ագնեշկա Ռադվանսկայի նկատմամբ: Շարապովան միայն մեկ խաղափուլում էր պարտվել Ռադվանսկային, հաղթել էր նաեւ Սառա Էրանիին, Սամանտա Ստոսուրին եւ Վիկտորիա Ազարենկոյին:

Եզրափակիչ մրցախաղն անցավ Սերենա Ուիլյամսի առավելությամբ, որը հաղթելով 2 խաղափուլում էլ (6-4, 6-3), նվաճեց գլխավոր մրցանակը:

Հարկ է նշել, որ Սերենան Շարապովայի համար մշտապես անհարմար մրցակցուհի է եղել: 2004-ին 2 անգամ հաղթելուց հետո Շարապովան հաջորդ 9 մրցախաղերում էլ պարտվել է Ուիլյամսին: Ստամբուլում նա ընթացիկ մրցաշրջանում արդեն 3-րդ անգամ զիջեց ամերիկացի թենիսիստուհուն: Մինչ այդ Մարիան անհաջող էր խաղացել Մադրիդում (1-6, 3-6) եւ Լոնդոնի օլիմպիադայի եզրափակիչում (0-6, 1-6): Հետաքրքրական է, որ վերջին հաղթանակն Ուիլյամսի նկատմամբ 2004-ին 17-ամյա Շարապովան տոնել էր Լոս Անջելեսում անցկացված աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունում: Իսկ 31-ամյա Սերենա Ուիլյամսը դարձավ աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունների ամենատարեց հաղթողը:

ՇԱԽՄԱՏ

# Հաջող մեկնարկը ճարունակություն չունեցավ

Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարի մեկնարկին նախորդած արագ շախմատի մրցաշարում 4 տուրից հետո աղյուսակը նույնքան միավորով գլխավորում էր Ավետիք Գրիգորյանը: Սակայն հաջորդ 5 տուրերում հայ շախմատիստն անհաջող հանդես եկավ, որի պատճառով նահանջեց 19-րդ հորիզոնական՝ վաստակելով ընդամենը 2 միավոր:

5-6-րդ տուրերում Գրիգորյանը հաշտություն կնքեց ադրբեջանցի Վասիֆ Դուրարբայլիի եւ ռուսաստանցի Բորիս Գրաչովի հետ, իսկ հաջորդ 2 մրցախաղերում պարտվեց ռուսաստանցիներ Անտոն Դեմչենկոյին եւ Իգոր Լիսիին: Ավարտական տուրում Գրիգորյանը հաղթեց Բոգդան Բելյակովին:

Հայ շախմատիստներից առավել հաջող հանդես եկան գրոսմայստերներ Ռոբերտ Հովհաննիսյանն ու Զավեն Անդրեասյանը, որոնք 6,5 միավորով զբաղեցրին համապատասխանաբար 10-րդ եւ 12-րդ տեղերը: Վահե Բաղդասարյանը 4,5 միավորով գրավեց 81-րդ տեղը, իսկ Գոռ Ալեքսանյանը 3,5 միավորով 133-րդն էր:

Արագ շախմատի մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Դենիս Խիսմատուլինը, որը վաստակեց 8 միավոր: 8 շախմատիստներ 7-ական միավորով բաժանեցին 2-9-րդ տեղերը:

# Հայաստանցի 3 շախմատիստ առաջատարների թվում է

Սանկտ Պետերբուրգում մեկնարկել է Միխայիլ Չիգորինի շախմատի հուշամրցաշարը, որի մասնակիցների թվում են մի խումբ հայ շախմատիստներ: Մեկնարկում միանգամից 53 շախմատիստների հաջողվեց 2 անընդմեջ հաղթանակ տոնել: Նրանց թվում են Հայաստանը ներկայացնող Ռոբերտ Հովհաննիսյանը, Ավետիք Գրիգորյանը եւ Հովիկ Հայրապետյանը, ինչպես նաեւ ռուսաստանցիներ Նիկիտա Մատինյանը, Սերգեյ Գրիգորյանցը եւ Գոռ Հայրապետյանը:

Մեր ամենափորձառու գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը վաստակել է 1,5 միավոր: Մեկնարկային տուրում նա պարտության մատնեց Օդիսեյ Սուլեյմանյանցին, ապա ոչ-ոքի խաղաց Ասլան Աիթբաեւի հետ: Մեկական միավոր ունեն Մարկ Բասենցյանը, Վահե Բաղդասարյանը, Աննա Հայրապետյանն ու Զավեն Անդրեասյանը:

# Հաշմանդամ բռնցքամարտիկը հաղթեց նոկաուտով



Ամերիկացի հաշմանդամ բռնցքամարտիկ Մայքլ Կոնստանտինոն, որն ի ծնե զրկված է աջ դաստակից, նոկաուտով նշեց նորամուտը պրոֆեսիոնալ ռինգում: Նրա հուժկու հարվածներից չդիմացավ Նաթան Օրտիզը:

«Ես պարզապես ցանկանում էի մարդկանց ապացուցել, որ կյանքում ամեն ինչ հնարավոր է, եթե նույնիսկ հանգամանքները քո դեմ են: Եթե ճաշ աշխատես ու հավատաս ինքդ քեզ, ապա կարելի է հասնել նպատակիդ», նշել է Կոնստանտինոն:

Իսկ ահա Օրտիզը պարտությունից հետո նշել է, որ լավ չէր նախապատրաստվել մենամարտին, քանի որ մարզումների համար ընդամենը 2 շաբաթ ուներ. «Ինձ հնարավորություն տվեք մի քանի ամիս մարզվելու եւ ես արդեն առաջին ռաունդում Կոնստանտինոյին գետնին կտապալեմ: Բացի այդ, չէի կարծում, թե հաշմանդամ բռնցքամարտիկն այդքան ուժեղ կգտնվի»:

Մայքլ Կոնստանտինոն մասնակցել է ԱՄՆ-ի սիրողական բռնցքամարտի «Ոսկե ձեռնոցներ» մրցաշարերին ու հասել է մինչեւ քառորդ եզրափակիչ:

# Ֆետելն ավելացնում է միավորների տարբերությունն Ալոնսոյից

«Ֆորմուլա-1» ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլում հաղթելով Հնդկաստանի Գրան պրիի խաղարկությունում, Սեբաստիան Ֆետելն ավելի մեծացրեց միավորների տարբերությունն իրեն հետապնդող Ֆեռնանդո Ալոնսոյից: Ֆետելն ընդհանուր հաշվարկով 240 միավոր ունի: Նա այժմ Ալոնսոյին գերազանցում է 13 միավորով: Վերջինս Հնդկաստանում վերջնագիծը հատեց 2-րդը: 3-րդ արդյունքը ցույց տվեց Մարկ Ուեբերը, որի շնորհիվ ընդհանուր հաշվարկով 167 միավորով տեղափոխվեց 4-րդ հորիզոնական: Լավագույն եռյակը եզրափակում է Կիմի Ռայկոնենը, որը ցույց տվեց 7-րդ արդյունքը:

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում 407 միավորով առջեւից է ընթանում «Ռեդ Բուլը»: 316 միավորով 2-րդ տեղում «Ֆերարին» է, իսկ եռյակը եզրափակում է «Մակլարենը» (306 միավոր):

# Հոբելյանական մրցաշար

Ֆուտբոլի Հարավամերիկյան կոնֆեդերացիան կազմակերպության 100-ամյա տարեդարձի առթիվ որոշել է 2016-ին ԱՄՆ-ում վիճարկել Ամերիկայի հատուկ գավաթը: Մրցաշարին կմասնակցեն այդ կազմակերպությանն անդամակցող 10 երկրների, ԱՄՆ-ի, Մեքսիկայի, ինչպես նաեւ ԿՈՆԿԱԿԱՖ-ի 2015-ի գավաթի խաղարկությունում լավագույն արդյունք ցույց տված 4 հավաքականները:

Ամերիկայի գավաթի խաղարկությունն անցկացվում է 1916-ից եւ ներկայումս կազմակերպվող մրցաշարերից ամենահինն է:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# «Գիրք ծաղկանցը» ներկայացվեց Լոս Անջելեսի Beyond the Stars թատրոնում

## *«Մենք միշտ փորձում ենք ներկայացնել այն, ինչի կարիքը կա»*



Երեւանի մնջախաղի պետական թատրոնի «Գիրք ծաղկանց» բեմադրությունը ներկայացվեց Լոս Անջելեսի նախ հանրային գրադարանի, ապա՝ «Beyond the Stars հանրահայտ թատրոնի դահլիճներում: Առաջին դեպքում հանդիսատեսները հիմնականում ոչ հայազգի ամերիկացիներ էին, որոնք հետաքրքրությամբ ու հիացմունքով ընդունեցին հայ արտիստների ելույթը: Երկրորդ պարագայում հանդիսասրահի հիմնական կազմը ներկայացնում էին սփյուռքահայ ամերիկացիները կամ, ինչպես թատրոնի գեղարվեստական ղեկավար **Ժիրայր Դադասյանը** որակեց, «տեղի արվեստասերների սերուցքը», քանի որ ժամանակ ու ցանկություն էին ունեցել ներկայանալու այս չափազանց հին ու չափազանց նոր թատրոնի հյուրախաղը վայելելու:

Միջոցառումը նվիրվեց հայ գրատպության 500 եւ UNESCO-ի կողմից Երեւանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու իրողությանը:

«Գիրք ծաղկանցը» Դերենիկ Դեմիրճյանի համանուն վիպակի բեմականացումն է, որ արտիստները թարգմանել ու նախշակարել էին մնջախաղի լեզվով՝ խուսափելով գեղարվեստական գործի պարզ նմանակումից, բայց պահելով դրա ոգին ու շունչը: Գրքի, ոգեղենի ու հոգեւորի հարատեւության մասին է Դեմիրճյանի ստեղծագործությունը, որ մնջախաղի բեմականացման մեջ վերակենդանանում է մեր մագաղաթյա ձեռագրերի մանրանկարչական գույներով ու արտիստական նրբալաց ու պլաստիկ կատարումներով:

«Մենք միշտ փորձում ենք ներկայացնել այն, ինչի կարիքը կա իրականության մեջ», ասում է Ժիրայր Դադասյանը: «Այսօր մարդուն դեպի գիրքը վերադարձնելու մեծ խնդիր է առկա: Իսկ մանրանկարչական գրքերի մեջ հայի մեր տեսակն է ամփոփված, մեր մտածողությունը, մեր խոսքը, մեր ոգին»:

Հանդիսատեսը հավանությամբ ընդունեց նաեւ «Աթոռը» մանրապատումը ՀՀ վաստակավոր արտիստ Յուրի Կոստանյանի կատարմամբ՝ կերպավորված էր տիրելու ու սեփականելու մարդու հավերժական տենչը, որը վերջնարդյունքում տառապանքի աղբյուր է դառնում նրա համար:

Մնջախաղը նաեւ քաղաքային արվեստի, այսպես ասած, փողոցային տեսակ է՝ շարժվող արձանների ու քանդակների տեսքով, որ եվրոպական մայրաքաղաքների կերպարային անբաժանելի մասնիկն է դարձել այսօր: Փողոցային մշակույթի այս ինքնատիպ ժանրի զարգացման հեռանկարը, ըստ թատրոնի գեղարվեստական ղեկավարի, մոտ ապագայում իրական կլինի նաեւ Երեւանի համար: Շարժվող արձանների ու քանդակների բնակավայր կդառնա Հյուսիսային պողոտան: Հենց այստեղ էլ մշտական բնակատեղի կունենա նաեւ Մնջախաղի թատրոնը:

«Մնջախաղը մարմնի լեզուն է, որ հաղորդակցման կատարյալ միջոց է: Նույնիսկ ամենապարզ հայացքը շատ ավելին է բովանդակում իր մեջ, քան եթե տեղափոխենք ինչյունական միջավայր: Մնջախաղը նաեւ ինքն իր հետ լինելու եւ ինքնաճանաչման ու ինքնաբացահայտման հնարավորություն է ընձեռում մարդուն: Եթե մնջախաղը ցնցում է առաջացնում հանդիսատեսի հոգում, ապա նա կարող է իրեն անհայտ անբացատրելի զգացողություններ ապրել ու հայտնաբերել իր մեջ, որոնց մասին երբեք չի մտածել»:

Մնջախաղի թատրոնը Լոս Անջելես էր ժամանել փոքրիկ խմբով 7-8 հոգի: Արտիստների այդ փոքրիկ խումբը, սակայն, կարողացավ օվկիանոսից այն կողմ սփռված հայ հանդիսատեսի հոգում էլ ակնկալված նույն զգացողություններն առաջացնել՝ կտրելով նրան առօրյայից ու կարճատեւ ընթացքով հանձնելով արվեստի մաքրագործող տիրապետությանը:

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Անվճար մանկապարտեզների վճարովի խմբակները

Արդեն մեկ տարի մեր հանրապետությունում մանկապարտեզներն անվճար են: Դա, իհարկե, լավ է այն ընտանիքների համար, որոնց երեխաները վարձի պատճառով չէին կարողանում մանկապարտեզ հաճախել: Իսկ այսօր երեխաներն ունեն այդ «աննախադեպ» հնարավորությունը:

Այս որոշումն առաջին հերթին շատ էր ուրախացրել անվճարունակ ընտանիքներին: Երկու երեխաների մայր **տկն Անահիտը** մեր զրույցում անկեղծացավ. «Շատ դժվար է այսօրվա աշխատավարձով երեխաների ծախսերը հոգալ, պարտադիր վճարումներ կատարել: Չնայած ընտանիքում բոլորս աշխատում ենք, մեկ է, էլի չենք հասցնում: Գոնե մանկապարտեզի համար կարող ենք չվճարել»: Վարձավճարի պատճառով մանկապարտեզ չէին գնում նաեւ Հասմիկի երկու որդիները: «Ճիշտ է, վարձն այդքան էլ մեծ գումար չէ, տասը հազար դրամ է, բայց եւ այնպես չէինք տեղավորվում: Իսկ այսօր երեխաներս իրենց հասակակիցների նման մանկապարտեզում են»:

Իսկ որքանո՞վ է ավելացել երեխաների թիվը մանկապարտեզներում վերջին մեկ տարվա ընթացքում: Պարզելու համար այցելեցինք Մալաթիա-Սեբաստիա համայնքում գործող մի քանի մանկապարտեզ: Տնօրեններից մեկը, որ չցանկացավ ներկայանալ, ասաց, որ երեխաների թիվն իրոք ավելացել է: «Դա լավ է, քանի որ երեխաները կարող են շփվել հասակակիցների հետ ամբողջ օրը՝ տանը նստելու փոխարեն: Եթե երկու-երեք տարի առաջ ծնողը երեխային վարձի պատճառով չէր կարողանում մանկապարտեզ բերել, ապա այսօր այդ խնդիրը լուծված է: Բոլոր երեխաներն էլ հաճախում են մանկապարտեզ՝ անկախ սոցիալական վիճակից»:

Հարեւան մանկապարտեզում էլ եղանք: Այստեղ եւս սաների թիվն ավելացել էր: Նույնիսկ երեսունից ավելի երեխա արդեն հերթագրված է մյուս տարվա ցուցակներում:

Պարզեցինք նաեւ, որ մանկապարտեզներում գործում են կրթական վճարովի խմբակներ: Այստեղ ծնողի համաձայնությամբ է միայն երեխան սովորում օտար լեզու կամ այլ առարկա. ոչ մի պարտադրանք, միայն ցանկություն:

Մեր այցելության պահին խմբակում անգլերենի պարապմունք էր անցկացվում: Երեսուն հոգանոց խմբից յոթ երեխա էր մասնակցում վճարովի դասընթացին: Փոքրիկ Գագիկը պարապմունքին չէր մասնակցում, բայց մեծ ցանկություն ունի, ուզում է դեսպան դառնալ: «Իսկ ինչ դեսպան առանց անգլերենի իմացության», մեծի պես տրտնջում էր փոքրիկը:

Այս առիթով մենք էլ տրտնջեցինք. ինչո՞ւ այս խմբակներն էլ անվճար չեն:

Ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ մեր երեխաներն այսքան վաղ տարիքից զգան սոցիալական շերտավորման ճնշումը:

Հարցն ուղղում ենք պատկան մարմիններին...

ԹԵՀՄԻՆԵ ԱՆՏԱՇՅԱՆ


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2 որոշմամբ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-47/12»**

Պատվիրատուն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, որը գտնվում է Արմավիրի մարզ ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի 2-րդ բլոկի անվտանգության հավանականության վերլուծության (ВАБ-1) եւ ըստ ներքին եւ արտաքին սկզբնական պատահարների փորձաքննության եւ վերանայման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «10» -րդ օրը ժամը «11:30»-ը: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումը 5000 ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող ՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում այդպիսի պահանջ ստանալու օրը: /*Վճարումն անհրաժեշտ է իրականացնել «Կոնվերս Բանկ» 1930000199200100 հաշվեհամարին/:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք 311 սենյակ հասցեով, փաստաթղթային /կամ էլեկտրոնային/ ձեւով մինչեւ սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված «10»-րդ օրվա ժամը «11:30»-ը եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*«ՀԱԷԿ» ՓԲԸ*






## ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր
ՑԱՆԿԱՆՈՒ՞Մ ԵՔ ԴԱՌՆԱԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀ,
ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ։

***«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ***

եթե ուզում եք լինել պրոֆեսիոնալ

**Բաղրամյան 24դ, հեռ. 54-24-81, 54-74-81**


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: